«ԱՄԲԵՐԴ» ՄԱՏԵՆԱՇԱՐ 27

Հեղինակային խմբի ղեկավար՝
ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ
գնդեսագիտության թեկնածու

Հեղինակային խմբի անդամներ՝
ՍՈՖՅԱ ՕՀԱՆՅԱՆ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՐՓԻՆԵ ՄԱԼՔՋՅԱՆ
փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի հայցորդ

ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կրտսեր փորձագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Հ 247

Հրատարակության է երաշխավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը

Մասնագիտական խմբագիր՝
Ավետիսյան Ս. Ս.
տ.գ.դ., պրոֆեսոր

Գրախոսներ՝ **Գրիգորյան Ա. Վ.**
տ.գ.թ., դոցենտ
Բաբաջանյան Ս. Ս.
տ.գ.թ.

Խմբագրական խորհուրդ՝
Աթոյան Կ. Լ. (նախագահ)
տ.գ.դ., պրոֆեսոր
Սուվարյան Յու. Մ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր
Վարդանյան Գ. Ի.
տ.գ.դ., պրոֆեսոր
Ավետիսյան Ս. Ս.
տ.գ.դ., պրոֆեսոր

Հ 247 **Հայաստանի բուհական վերլուծական կենտրոնները** / Վ.Կ. Աթոյան և ուրիշներ.- Եր.: Տնտեսագետ, 2015 –58 էջ.- («Ամբերդ» մատենաշար):

Արդի դարաշրջանի քաղաքական, տնտեսական, սոցիոմշակութային մարտահրավերների համատեքստում կարևորվում է բուհական-ակադեմիական միջավայրում գործող հետազոտական, վերլուծական, հատկապես հասարակական և հումանիտար կենտրոնների դերը: Այդ խնդրի ուսումնասիրությանն է նվիրված «Հայաստանի բուհական վերլուծական կենտրոնները» հետազոտությունը, որը կատարվել է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի համատեղ իրականացվող «Տարածաշրջանի վերլուծական կենտրոնները» հետազոտության շրջանակներում:

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58

ISBN 978-9939-61-120-4

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2015 թ.
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2015 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն **5**

1. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ **8**
1.1. ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ 8

2. ՄՇԱԿՈՒԹԱՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ **11**
2.1. ԵՊԼՀ Բրյուսովյան գիտական կենտրոն 11
2.2. ՀԱՀ Թրփանճեան հասարակական հետազոտությունների կենտրոն .. 12
2.3. ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն 14
2.4. ԵՊՀ Եգիպտագիտության հայկական կենտրոն 15
2.5. ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն 16
2.6. ՀՀՊԿԱ տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն 18

3. ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ **21**
3.1. ՀԱՀ Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիր 21
3.2. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն 21

4. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ **24**
4.1. ԵՊՀ տարածաշրջանային ինտեգրման և կոնֆլիկտների լուծման կենտրոն 24
4.2. ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների ԳՀ լաբորատորիա 25
4.3. ԵՊՀ Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոն 26
4.4. ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն 28

5. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ **29**
5.1. ԵՊՀ Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության ԳՀ լաբորատորիա 30
5.2. ԵՊՀ Փորձարարական հոգեբանության ԳՀ լաբորատորիա 30
5.3. ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոն 32
5.4. ՀՍ «Ուրարտու» համալսարանի Կիրառական վարքային վերլուծության կենտրոն 33
5.5. ԵՊՀ Անձ և սոցիալական միջավայր ԳՀ լաբորատորիա 33
5.6. ՀՍ «Ուրարտու» համալսարանի Ընտանիքի հետազոտման և աջակցության կենտրոն 34
5.7. ՀՀՊԿԱ Կառավարչական գործունեության հոգեբանության ԳՀ լաբորատորիա 35

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ 36
6.1. ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոն 36
6.2. ՀԱՀ Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոն 37
6.3. ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի կենտրոն 38

7. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ 40
7.1. ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիա 40
7.2. ԵՊՀ Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների լաբորատորիա 41
7.3. ՀՌՀ Ազգային անվտանգության ոլորտում ռազմավարական հետազոտությունների լաբորատորիա 42

8. ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ 43
8.1. ԵՊԼՀ Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոն 43
8.2. ՀՀՊԿԱ Գիտության կառավարման հետազոտական կենտրոն 45

Եզրակացություն 46

Օգտագործած գրականության ցանկ 49

Հավելված 50

Ամփոփումներ 56

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի դարաշրջանի քաղաքական, տնտեսական, սոցիոմշակութային մարտահրավերների համատեքստում, որոնք արմատական փոփոխությունների են ենթարկում ժամանակակից հասարակության բոլոր ոլորտները՝ վերջիններս դարձնելով ավելի բազմաբնույթ և բազմաշերտ, կարևորվում է բուհական-ակադեմիական միջավայրում գործող հետազոտական, վերլուծական, հատկապես հասարակական և հումանիտար կենտրոնների դերը:

Միևնույն ժամանակ, հասարակագիտական ոլորտի այս կարևոր դերակատարությունը Հայաստանի Հանրապետությունում դեռևս հստակորեն և լիովին գիտակցված չէ. բնագավառի անհրաժեշտությունը գրեթե չի արժևորվում (բացառություն է, թերևս, հայագիտության ոլորտը): Դա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. ՀՀ-ում բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացումը թույլ հիմքերի վրա է. բուհերում գիտահետազոտական աշխատանքներն ու դասավանդումը հիմնականում տարանջատված են: Բուհական կրթությունը, առաջին հերթին, դիտվում է որպես առկա գիտելիքներն ու գիտությունը վերարտադրող մի համակարգ, որտեղ նոր գիտելիքի ստեղծումը երկրորդական է: Թերևս, դա է պատճառը, որ թեպետ որոշ բուհերում իրականացվում են հետազոտություններ առանձին ծրագրերի շրջանակներում, սակայն բացակայում են հետազոտական կենտրոնները:
2. Թույլ է գիտություն–քաղաքականություն–տնտեսություն–հասարակություն կապը: Դրա պատճառներից մեկն այն է, որ հումանիտար և հասարակական գիտություններն իրենց բնույթով բավական տեղայնացված են և պարփակված հետազոտական որոշակի համայնքների (հետազոտական ինստիտուտներ, ոչ կառավարական կազմակերպություններ և բուհեր) սահմաններում: Թեև ՀՀ բուհական հումանիտար վերլուծական կենտրոններն ունեն այլ երկրների և օտարերկրյա կազմակերպությունների հետ համագործակցության որոշակի փորձ, որն իրականացվում է հիմնականում հրատարակությունների ֆինանսավորման, համատեղ հետազոտությունների անցկացման և գիտաժողովների կազմակերպման ձևերով, այնուամենայնիվ, իսպառ բացակայում է բուհական կենտրոնների՝ միմյանց հետ համագործակցությունը: Սա դրսևորվում է թե՛ համագործակցության հանդեպ նախաձեռնողականության բացակայությամբ և այդ ուղղությամբ աշխատանքներ կատարելու ան-

տարբերությամբ, թե՛, երբեմն, համագործակցությունից բացահայտ հրաժարմամբ:

Բարեբախտաբար, ներկայումս փոխվում է այն մտայնությունը, թե ՀՀ-ում բուհերն առավելապես կրթական հաստատություն են, իսկ հետազոտական աշխատանք և գիտական ուսումնասիրություն պետք է իրականացվեն իբր բացառապես համապատասխան գիտահետազոտական ինստիտուտներում: Ձևավորվում են մեխանիզմներ և գործիքներ, որոնք հնարավորություն են ընձեռում բուհերում խրախուսելու և խթանելու գիտական, գիտահետազոտական գործունեությունը. ասվածի վկայություններից է հասարակական գիտությունների բնագավառում հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացման և հասարակության արդի պահանջներին համապատասխանեցման նպատակով Գիտության պետական կոմիտեի՝ ՀՀ կառավարությանը ներկայացրած հումանիտար և հասարակական գիտությունների զարգացման հայեցակարգը, որը մշակվել է ՀՀ կառավարության 2010 թ. մայիսի 27-ի նիստի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության» հիմնադրույթներին համապատասխան[1]:

«Հայաստանի բուհական վերլուծական կենտրոնները» հետազոտությունը կատարվել է «Նորավանք» գիտակրթական համալիրի և ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի համատեղ «Տարածաշրջանի վերլուծական կենտրոնները» հետազոտության շրջանակներում. 2015 թ. հունվարից հունիս ժամանակահատվածում[2] ուսումնասիրվել են ՀՀ բուհերում գործող հումանիտար վերլուծական կենտրոնները՝ ըստ հետևյալ չափորոշիչների.

- ռազմավարական առաջնահերթություններ,
- կառուցվածք (ղեկավար, կառավարման մարմին, ստորաբաժանումներ),
- աշխատակազմ,
- հրապարակումներ,
- գործընկերներ,
- ֆինանսական տվյալներ:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են պետական 38 և ոչ պետական 34 բարձրագույն ուսումնական հաստատություն և մասնաճյուղ (ընդամենը՝ 72)[3]: Ուսումնասիրված բուհերից առանձնացվել են հումանիտար

[1] http://www.scs.am/files/has-git-zarg-tsragir-jamanakacuyc.pdf

[2] Թեև «Հայաստանի բուհական վերլուծական կենտրոնները» հետազոտությունը վերաբերում է մինչև 2014 թ. վերջը ՀՀ բուհերում կամ բուհերին կից գործող հումանիտար վերլուծական կենտրոնների գործունեությանը, սակայն ուսումնասիրության մեջ մասնակի անդրադարձ է կատարվել նաև 2015 թ. սկզբին հիմնադրված որոշ կենտրոնների:

[3] www.edu.am

ուղղվածության 17 պետական և 24 ոչ պետական բուհեր (ընդամենը՝ 41): Հետազոտության հաջորդ քայլի նպատակն այդ բուհերում հումանիտար վերլուծական կենտրոնների առկայությունը պարզելն էր: Այդ նպատակով 2015 թ. հունվարի առաջին կեսին զուգահեռաբար ուսումնասիրվել են այդ բուհերի կայքերը և կատարվել են հեռախոսազանգեր: Հունվարի 22-ին ՀՊՏՀ ռեկտորի անունից գրություններ են ուղարկվել 16 պետական և 2 ոչ պետական բուհեր (ընդամենը՝ 18): Արձագանքները ստացվել են հունվար–մարտ ժամանակահատվածում:

ՀՀ բուհական–ակադեմիական միջավայրում գործող հումանիտար վերլուծական կենտրոնների թիվը վերջին տարիներին աճել է: Ներկայումս ՀՀ բուհերում գործում էհումանիտար վերլուծական 29 կենտրոն, որից 2-ն իրենց գործունեությունը սկսել են դեռևս խորհրդային տարիներին: Երևանի պետական համալսարանն ունի հումանիտար վերլուծական 15 կենտրոն, Հայաստանի ամերիկյան համալսարանը՝ 4, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիան՝ 3, Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանը՝ 2, Հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանը՝ 2, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ 1, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը՝1, Գորիսի պետական համալսարանը՝ 1:

ՀՀ ԲՈՒՀԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Ըստ հետազոտական ուղղվածության՝ բուհական հումանիտար վերլուծական կենտրոնները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

- հայագիտական,
- մշակութաքաղաքակրթական,
- տնտեսագիտական,
- սոցիոլոգիական,
- հոգեբանական,
- բնապահպանական-առողջապահական,
- տեղեկատվական-ռազմավարական,
- գիտակրթական:

1 ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

1.1. ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ

Երևանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը[1] հիմնադրվել է 2008 թ. հուլիսի 10-ին Հայագիտական կենտրոնի հիման վրա (վերջինս ստեղծվել է 1968 թ. (հիմնադիրներ՝ Մ. Ներսիսյան և Էդ. Աղայան) որպես գիտահետազոտական լաբորատորիա, հետագայում վերանվանվել «Հայագիտական հետազոտությունների կենտրոն»), որում ներառվել են Հայագիտական հետազոտությունների կենտրոնը, հնագիտական հետազոտությունների, Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիաները, հայ-վրացական կապերի կենտրոնը և հայ-օսմանական առնչությունների բաժինը:

Ինստիտուտն ունի գիտական խորհուրդ, տնօրեն, փոխտնօրեն, 8 ստորաբաժանում, այդ թվում՝ 6 բաժին, 2 լաբորատորիա: Գիտական խորհուրդը բաղկացած է 27 անդամից (որից գիտությունների դոկտոր՝ 9, գիտությունների թեկնածու՝ 7, առանց գիտական աստիճանի՝ 11): Տնօրենն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Աղբյուրագիտական լաբորատորիայի ղեկավար Արամ Սիմոնյանը: Ինստիտուտի ստորաբաժանումներն են.

- Աղբյուրագիտության բաժին,

[1] http://www.armin.am/

- Հայ-վրացական հարաբերությունների բաժին,
- Հայ-օսմանյան առնչությունների բաժին,
- Հայ-քրդական առնչությունների բաժին,
- Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժին,
- Ցեղասպանագիտության բաժին,
- Բաբկեն Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիա,
- Հնագիտական հետազոտությունների լաբորատորիա:

Ինստիտուտի աշխատակիցների ընդհանուր քանակը 54-ն է (որից գիտությունների դոկտոր՝ 6, գիտությունների թեկնածու՝ 16, առանց գիտական աստիճանի՝ 32):

Ինստիտուտի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից (2014 թ.՝ 53162,6 հազար դրամ[1], 2015 թ.՝ 58289,1 հազար ՀՀ դրամ[2]): Ֆինանսավորման այլ աղբյուրների մասին տեղեկություն չկա:

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը ԵՊՀ գիտակրթական գործունեություն իրականացնող ստորաբաժանում է, որտեղ իրականացվում են հայագիտական ուղղվածության հետազոտություններ, պրոֆեսիոնալ թվայնացում և համացանցային պաշարներում հայագիտական նյութերի ներկայացվածության ապահովում: Ինստիտուտն իրականացնում է նաև մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրեր, սփյուռքում հայագետների պատրաստման և մասնագիտական հմտությունների ապահովման նպատակով ինստիտուտում գործում է հեռաուսուցման համակարգը:

ՀՀԻ հետազոտությունների հիմնական առանցքը հետևյալ խնդիրներն ու ուղղություններն են.

- Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության պատմություն, պատմագրություն և մատենագիտություն (Ցեղասպանագիտության բաժին),
- Հայ-օսմանական առնչություններ (Հայ-օսմանական առնչությունների բաժին),
- Հայ հնագիտություն (Հնագիտական հետազոտությունների լաբորատորիա),
- Հայաստանի պատմական աշխարհագրության, քարտեզագրության ուսումնասիրություն (Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիա),
- Հայագիտական պատմագիտական և աղբյուրագիտական ժառան-

[1] http://scs.am/files/byuje_2014.pdf
[2] http://scs.am/uploaded/info/2015-budjet.xls

գության ուսումնասիրություն (Աղբյուրագիտության բաժին),
- Վիրտուալ (էլեկտրոնային-համացանցային) հայագիտություն (Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժին),
- Հայ-վրացական հարաբերություններ (Հայ-վրացական հարաբերությունների բաժին),
- Հայ-քրդական հարաբերություններ (Հայ-քրդական առնչությունների բաժին):

Կենտրոնն ունի մի քանի կայքեր, որոնք լրացվում են հայագիտությանն առնչվող տեղեկատվությամբ.

- http://www.historyofarmenia.am/ ՀՀԻ հայոց պատմություն
- http://www.armenianarchaeology.am/ ՀՀԻ հնագիտություն
- http://www.armenianlanguage.am/ ՀՀԻ հայոց լեզու
- http://www.armeniaculture.am/ ՀՀԻ մշակույթ
- http://www.armenianreligion.am/ ՀՀԻ կրոն
- http://www.armeniandiaspora.am/ ՀՀԻ սփյուռք
- http://www.armeniansgenocide.am/ ՀՀԻ հայոց ցեղասպանություն
- http://masters.armeniansgenocide.am/ ՀՀԻ ցեղասպանագիտություն, մագիստրոսական ծրագիր
- http://www.masters.armin.am/ ՀՀԻ հայագիտություն, մագիստրոսական ծրագիր

Կենտրոնի գործընկերներն են.

- ՀՀ կրթության և գիտության նախարարություն,
- ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե,
- ՀՀ սփյուռքի նախարարություն,
- ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողով,
- Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ,
- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
- ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
- ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,
- Մատենադարան,
- Հայաստանի ազգային արխիվ:

Ինստիտուտը հրապարակում է պարբերական, գրքեր, հոդվածներ, փաստաթղթեր (հայագիտության վերաբերյալ արխիվային վավերագրերի ձեռքբերում ՀՀ, ՌԴ և այլ երկրներում գտնվող արխիվներից, հայոց պատմության առանձին էջերին առնչվող արժեքավոր արխիվային փաստաթղթերի բացահայտում և ժողովածուների ձևով հրատարակության նախապատրաստում), քարտեզներ (օրինակ, պատմական զարգացման տարբեր փուլերում Հայաստանի պատմաաշխարհագրական ուսումնասիրությունների տա-

ռածական տեղաբաշխման պատկերում և մոդելավորում՝ քարտեզների ստեղծում):

2014 թ. սկսած՝ Ինստիտուտը հրապարակում է «Հայագիտության հարցեր» գիտական պարբերականը, որում տպագրվում են ԵՊՀ-ում և հանրապետության այլ գիտակրթական հաստատություններում կատարվող հայագիտական աշխատանքները, հանդեսին աշխատակցում են նաև ՀՀ գիտական հաստատությունների, Սփյուռքի և արտերկրի ճանաչված գիտնականներ: Տպագրվում է տարեկան երեք անգամ՝ 16 մամուլ ծավալով:

Ըստ ԵՊՀ 2013–2014 թթ. գործունեության հաշվետվության՝ 2013–2014 թթ. հրապարակվել է 1 դասագիրք, 5 մենագրություն, 66 հոդված, զեկուցումների 16 թեզիս:

2 ՄՇԱԿՈՒԹԱՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Մշակութաքաղաքակրթական կենտրոններն են ԵՊԼՀ Բրյուսովյան գիտական կենտրոնը, ՀԱՀ Թրփանճեան հասարակական հետազոտությունների կենտրոնը, ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը, ԵՊՀ Եգիպտագիտության հայկական կենտրոնը, ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը, ՀՀՊԿԱ տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնը:

2.1 ԵՊԼՀ Բրյուսովյան գիտական կենտրոն

Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի Բրյուսովյան գիտական կենտրոնը[1] հիմնադրվել է 1962 թ. Վարդան Այվազյանի կողմից: Ղեկավարն է բանասիրական գիտությունների թեկնածու Անանա Զուլյանը:

Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումներից է Վ. Բրյուսովի թանգարանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 13-ն է, որից 12-ը՝ հրավիրյալ փորձագետ (որից գիտությունների դոկտոր՝ 8 (արտերկրից), գիտությունների թեկնածու՝ 3 (2-ը՝ արտերկրից), առանց գիտական աստիճանի՝ 1): Կենտրոնի աշխատանքներում ներգրավվում են նաև ուսանողներ:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքը հետևյալ խնդիրներն ու ուղղություններն են.

[1] Տվյալները բերված են ըստ հետազոտական խմբի գրությանը բուհից ուղարկված պատասխանի:

- ✓ Բրյուսովագիտություն,
- ✓ Հայ-ռուսական գրական և մշակութային կապեր,
- ✓ Արծաթե դարի ռուս գրականություն և արվեստ,
- ✓ Ռուսական սիմբոլիզմի գրականություն և արվեստ,
- ✓ Մշակութային ժառանգության պահպանում:

Կենտրոնը հրատարակում է «Բրյուսովյան ընթերցումներ» ժողովածուն (3–4 տարի պարբերականությամբ):

2014 թ. հանձնվել է տպագրության «В. Брюсов. Драматургия» գիրքը (500 էջ), որը հրատարակվելու է Մոսկվայի «Совпадение» հրատարակչությունում:

2.2 ՀԱՀ Թրփանճեան հասարակական հետազոտությունների կենտրոն

Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հասարակական հետազոտությունների կենտրոնը[1] հիմնադրվել է 1995 թ. ՀԱՀ քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների դպրոցի կողմից: Այս կենտրոնը միակն է ՀՀ բուհական կենտրոններից, որ տեղ է գտել աշխարհի առաջատար ՈՒԿ վարկանշավորման համակարգում. այն Կենտրոնական Ասիայի լավագույն ՈՒԿ անվանակարգում զբաղեցնում է 19-րդ տեղը (2014 թ.):

Կենտրոնն ունի տնօրեն, տնօրենի օգնական, 1 գիտաշխատող մագիստրոս, ուսանողական թիմ: Ուսանողները մշտական աշխատակից չեն, նրանց թիվը տարբեր հետազոտություններում տարբեր է լինում. ընթացիկ հետազոտության մեջ ընդգրկված է 3 ուսանող, նախորդ հետազոտության մեջ՝ 6 ուսանող:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 3-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 1):

Կենտրոնը շահույթ չհետապնդող, անկախ կազմակերպություն է և ֆինանսավորվում է հիմնականում Ջերրի Թրփանճեանի ընտանիքի (Jerry Turpanjian Family) նվիրատվությունների, ինչպես նաև այնպիսի կազմակերպությունների դրամաշնորհների միջոցով, ինչպիսիք են Ուրբան ինստիտուտը, զարգացման ասոցիացիաները, Համաշխարհային բանկը և ԱՄՆ տեղեկատվական գործակալությունը: Ֆինանսավորման առումով աջակցություն է ցուցաբերում նաև համալսարանը: Բացառապես ուսանողներից բաղկացած հետազոտական խմբերը կազմվում են հարցազրույցների անցկացման, վի-

[1] http://tcpa.aua.am/

ճակագրական տվյալների հավաքագրման նպատակով: Հարցումներ անցկացնող ուսանողներն աշխատում են օրավարձով (20–30 ԱՄՆ դոլար):

Հիմնական պատվիրատուներն են.

- ✓ ԱՄՆ Միջազգային զարգացման գրասենյակը (ԱՄՆ ՄԶԳ) Հայաստանում (USAID),
- ✓ Ուրբան ինստիտուտը,
- ✓ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակը,
- ✓ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը,
- ✓ ԷկոՀայաստան դաշինքը,
- ✓ Կանանց իրավունքների կենտրոնը,
- ✓ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը,
- ✓ Բաց հասարակության ինստիտուտը,
- ✓ Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչությունը,
- ✓ ՀՀ կենտրոնական բանկը:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքը հետևյալ խնդիրներն ու ուղղություններն են.

- ✓ Աջակցություն երիտասարդ հետազոտողներին:
- ✓ Աջակցություն Հայաստանում տարբեր քաղաքական հիմնախնդիրների լուծմանը: ԹՀՀԿ հետազոտողներն ունեն զարգացման նախագծերի խիստ հանձնառություն: Կենտրոնը տրամադրում է հետազոտական ծառայությունների ամբողջական փաթեթ՝ տվյալների որակական և քանակական վերլուծության համար անհրաժեշտ վստահելի և հիմնավորված մեթոդաբանություն, ցուցանիշների մշակում, հաշվետվությունների պատրաստում:
- ✓ Կենտրոնի աշխատակիցները փորձառու են հարցումների և հասարակական կարծիքի ուսումնասիրման, ֆոկուս խմբերի, խորը հարցազրույցների, քաղաքականության և իրավական դաշտի վերլուծության և վիճակագրական վերլուծությունների կատարման նպատակով SPSS (Statistical Package for the Social Sciences) ծրագրի օգտագործման, գործընթացների տարբեր սցենարների մշակման մեջ:
- ✓ ԹՀՀԿ-ը հիմնականում աշխատում է միջազգային հասարակական կազմակերպությունների (հայաստանյան ներկայացուցչությունների), ինչպես նաև պետական կառույցների պատվերների շրջանակներում: Ընդ որում, իրականացվող հետազոտություններին մեթոդաբանական, խորհրդատվական, նաև՝ հաշվետվությունների մշակման գործում աջակցություն են ցուցաբերում ինչպես պետա-

կան կառույցները, այնպես էլ միջազգային տարբեր կազմակերպություններ:

2012–2014 թթ. Կենտրոնում կատարվել է 5 հետազոտություն:

2.3 ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն

Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը[1] հիմնադրվել է 2006 թ. հուլիսին ԵՊՀ Գիտական խորհուրդի կողմից՝ Հայաստանում Եվրոպական միության պատվիրականության համագործակցությամբ: Կենտրոնի տնօրենն է իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արթուր Ղազինյանը:

Կենտրոնն ունի կառավարման խորհուրդ, տնօրեն և խորհուրդ: Կառավարման խորհրդը 31 անդամից է: Կառավարման խորհրդի մեջ են Կենտրոնի տնօրենը և նրա տեղակալը, Կենտրոնի 4 փորձագետ, ԵՊՀ 9 դասախոս՝ 3-ը իրավագիտության, 2-ը՝ միջազգային հարաբերությունների, 1-ական ռոմանագերմանական բանասիրության, տնտեսագիտության, պատմության և սոցիոլոգիայի ֆակուլտետների խորհուրդներից առաջադրված, ներկայացուցիչներ ԵՊՀ ռեկտորատից՝ 1, ներկայացուցիչ, Արտաքին գործերի նախարարությունից՝ 2, Արդարադատության նախարարությունից, ՀՀ նախագահի աշխատակազմից և Ազգային ժողովից, ՀՀ-ում Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը, ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակից և Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության հայաստանյան գրասենյակից 1-ական, Կենտրոնի մագիստրոսական ծրագրի 7 ուսանող, որոնք ենթարկվում են ռոտացիայի: Ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման համար գործում է խորհուրդ՝ կազմված կենտրոնի տնօրենից, տեղակալից, Կենտրոնի փորձագետներից և դասախոսներից:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 12-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 4, առանց գիտական աստիճանի՝ 8): Կենտրոնում նաև ներգրավված է հրավիրյալ 7 փորձագետ:

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից (2014 թ.՝ 42000,0 հազար դրամ[2], 2015 թ.՝ 42000,0 հազար ՀՀ դրամ[3]): Ֆինանսավորման այլ աղբյուրների մասին տեղեկություն չկա:

[1] http://www.ces.am/
[2] http://scs.am/files/byuje_2014.pdf
[3] http://scs.am/uploaded/info/2015-budjet.xls

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են հետևյալ խնդիրներն ու ուղղություններն են.

1. «Եվրոպական ուսումնասիրություններ» միջմասնագիտական մագիստրոսական ծրագրի կոորդինացում,
2. «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» միջմասնագիտական տարածաշրջանային մագիստրոսական ծրագրի կոորդինացում,
3. Գիտական և միջմասնագիտական հետազոտությունների նախաձեռնում և իրականացում ԵՄ, ԵՄ–Հայաստան, ԵՄ–Հարավային Կովկաս առանձին հիմնախնդիրների համագործակցության վերաբերյալ,
4. Ներպետական, տարածաշրջանային և կարևորագույն ոլորտներին վերաբերող միջմասնագիտական ծրագրերի հետազոտություն,
5. ԵՄ տեղեկատվական կենտրոն (EUi) Ռեսուրս կենտրոնի ընդլայնում և կատարելագործում,
6. Եվրոպական ճանաչված համալսարանների և կենտրոնների հետ համագործակցություն:

Կենտրոնն իրականացնում է վճարովի մագիստրոսական ծրագիր, նախատեսում է իրականացնել ևս 1-ը (ուսման տևողությունը՝ 2 տարի, տարեկան վարձը՝ 750 հազար դրամ):

Ըստ ԵՊՀ 2013–2014 թթ. գործունեության հաշվետվության՝ 2013–2014 թթ. հրապարակվել է 1 հետազոտություն:

2.4 ԵՊՀ Եգիպտագիտության հայկական կենտրոն

Երևանի պետական համալսարանի Եգիպտագիտության հայկական կենտրոնը[1] հիմնադրվել է 2006 թ. դեկտեմբերին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:

Կենտրոնի տնօրենն է եգիպտագիտության, հնագիտության դոկտոր Քրիստիան Թութունջյան դը Վարդավանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 3-ն է (որից գիտությունների դոկտոր՝ 1, առանց գիտական աստիճանի՝ 2):

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից (2014 թ.՝ 3900,8 հազար դրամ[2], 2015 թ.՝ 4056,8 հազար ՀՀ դրամ[3]): Ֆինան-

[1] https://armenianegyptologycentre.wordpress.com/
[2] http://scs.am/files/byuje_2014.pdf
[3] http://scs.am/uploaded/info/2015-budjet.xls

սավորման այլ աղբյուրների մասին տեղեկություն չկա:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքը հետևյալ խնդիրներն ու ուղղություններն են.

- ✓ Հին եգիպտերենի վոկալացում,
- ✓ Հին եգիպտերենի մեջ հնդեվրոպական լեզվական շերտի հետագա բացահայտում,
- ✓ Փարավոնի կողմից իրագործվող ամենօրյա ծեսի 36-րդ գլխի գրական ու ոճական կառուցվածքի ուսումնասիրություն,
- ✓ 21-րդ դինաստիայի սարկոֆագներից մեկի գիտական ճշգրիտ վերակազմություն,
- ✓ Հին Եգիպտոսի բույսերի մնացորդների տեղեկատուի երրորդ հրատարակության պատրաստում,
- ✓ «Հին Եգիպտոսի բուսաշխարհը» գրքի հրատարակում:

Եգիպտագիտության հայկական կենտրոնը, զբաղվելով Հին Եգիպտոսի քաղաքակրթության ուսումնասիրությամբ, նպատակն ունի ստեղծել եգիպտագիտության հայկական դպրոց և սեփական ներդրումն ունենալ այս գիտության զարգացման մեջ:

Կենտրոնի գործընկերներն են.

- ✓ Մոնպելիեի համալսարանի Եգիպտագիտության ինստիտուտը (Ֆրանսիա),
- ✓ Արիզոնայի համալսարանի Եգիպտագիտության ու հնագիտության ֆակուլտետը (ԱՄՆ),
- ✓ Լոնդոնի Քոլեջ համալսարանի Հնագիտության ինստիտուտը (Մեծ Բրիտանիա),
- ✓ Երուսաղեմի բուսաբանական այգին (Իսրայել),
- ✓ Օքսֆորդի համալսարանի Գրիֆիթի եգիպտագիտության ինստիտուտը (Մեծ Բրիտանիա):

Ըստ ԵՊՀ 2013–2014 թթ. գործունեության հաշվետվության՝ 2013–2014 թթ. հրապարակվել է 1 մենագրություն, 2 հոդված:

2.5 ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն

Երևանի պետական համալսարանի Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը[1] հիմնադրվել է 2007 թ. ապրիլին ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

[1] http://cccsysu.com/

Կենտրոնն ունի գիտական խորհուրդ, որի անդամները 11-ն են (որից գիտությունների դոկտոր՝ 4, գիտությունների թեկնածու՝ 6, առանց գիտական աստիճանի՝ 1): Նրանք են ԵՊՀ ռեկտոր պրոֆ. Արամ Սիմոնյանը, ՔՄՀԿ տնօրեն պրոֆ. Դավիթ Հովհաննիսյանը, արտակարգ և լիազոր դեսպան պ. գ. դ. Արման Կիրակոսյանը, ՀՀ Նախագահի աշխատակազմի Արտաքին կապերի վարչության պետ Արտակ Ապիտոնյանը, Եվրասիա համագործակցության հիմնադրամի տնօրեն Գևորգ Տեր-Գաբրիելյանը, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Կիրառական ազգագրություն թեմատիկ խմբի ղեկավար պ.գ.թ. Հրանուշ Խառատյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արդիականության ազգաբանության բաժնի վարիչ պրոֆ. Լևոն Աբրահամյանը, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն պրոֆ. Ռուբեն Սաֆրաստյանը, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող պրոֆ. Սուրեն Զոլյանը, ՔՄՀԿ ավագ գիտաշխատող պ.գ.թ. Տիգրան Մաթոսյանը, պ.գ.թ. Հայկ Քոչարյանը: Կենտրոնի տնօրենն է բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Դավիթ Հովհաննիսյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 6-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 4): Կենտրոնում նաև ներգրավված է համագործակցող 5 փորձագետ:

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից (2014 թ.՝ 4875,9 հազար դրամ[1], 2015 թ.՝ 5070,9 հազար ՀՀ դրամ[2]): Ֆինանսավորման այլ աղբյուրների մասին տեղեկություն չկա:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքն են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- ✓ Ինքնության և արժեքային համակարգերի մրցակցության խնդիրները գլոբալացման պայմաններում,
- ✓ Հայ-թուրքական հարաբերությունները՝ արժեքաբանական տեսանկյունից,
- ✓ «Մեծ Միջին Արևելք» ծրագրի հիմնադրույթները և Հայաստանը,
- ✓ Ենթամշակութային համակարգեր և արժեքային համակարգերի մրցակցություն,
- ✓ Մշակութային հարմարման մեխանիզմների դերը և առանձնահատկությունները,
- ✓ Տարածաշրջանային անվտանգության համակարգերը և Իրան–ԱՄՆ հարաբերությունները,
- ✓ «Արևելյան գործընկերություն» ծրագիրը և Հայաստանը:

[1] http://scs.am/files/byuje_2014.pdf
[2] http://scs.am/uploaded/info/2015-budjet.xls

Կենտրոնն իրականացնում է հանրային քաղաքականության խորհրդատվություն, հրատարակում է հոդվածներ, մենագրություններ: 2007–2014 թթ. Կենտրոնը հրատարակել է վերլուծական 6 տեղեկագիր:

Ըստ ԵՊՀ 2013–2014 թթ. գործունեության հաշվետվության՝ 2013–2014 թթ. հրապարակվել է 5 հոդված, զեկուցումների 6 թեզիս:

2.6 ՀՀՊԿԱ տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն

«Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն» ծրագիրն[1] իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի միջև կնքված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրերի շրջանակներում: Կենտրոնը հիմնադրվել է 2014 թ.: Ղեկավարն է կենսաբանական գիտությունների թեկնածու Տիգրան Հարությունյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 6-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 4):

2014 թ. Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. Տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության համար հետաքրքրություն ներկայացնող (առաջին հերթին՝ անմիջական հարևանությամբ) երկրներում ընթացող հասարակական, տնտեսական, գիտակրթական, քաղաքական գործընթացների ուսումնասիրություններ:

Ուսումնասիրվել են.

- ✓ մարտահրավերներն ու հնարավորությունները, որոնք ստեղծվում են Հայաստանի համար՝ Մաքսային միությանը և Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությամբ,
- ✓ Եվրամիության ընդլայման ծրագրերի ազդեցությունը Հայաստանի և տարածաշրջանի վրա,
- ✓ Մերձավոր Արևելքի երկրներում գործընթացները և դրանց ազդեցությունը Հայաստանի Հանրապետության ու հայկական համայնքների վրա:

[1] Տվյալները բերված են ըստ հետազոտական խմբի գրությանը բուհից ուղարկված պատասխանի:

2. Նշված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են սեմինարներ.
   1) «Հարավային Կովկասի երկրների գիտության վիճակը թվերով» (2014 թ. հունիսի 27), կենտրոնի ղեկավար՝ Տիգրան Հարությունյան,
   2) «Թուրքական ուղեղային կենտրոնների զարգացման փուլերը» (2014 թ. հոկտեմբերի 22), կենտրոնի գիտաշխատող՝ Արեստակես Սիմավորյան,
   3) «Վրաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության առանձնահատկությունները» (2014 թ. նոյեմբերի 19), կենտրոնի գիտաշխատող՝ Ջոնի Մելիքյան:
3. Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի գիտաշխատողները մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել միջազգային և հանրապետական մի քանի գիտաժողովներում, ֆորումներում և սեմինարներում: Դրանք են՝
   1) Սեպտեմբերի 25–29՝ Հունաստանի Հանրապետությունում կայացած «Քաղաքակրթությունների երկխոսություն» Հոդոսյան ֆորումին, մասնակցել են կենտրոնի ղեկավար Տ. Հարությունյանը և գիտաշխատող Ջ. Մելիքյանը: Ֆորումի աշխատանքներին մասնակցել են 60 երկրների մոտ 400 ներկայացուցիչ: Ներկա են եղել նախկին և ներկա քաղաքական գործիչներ, հասարակական գործիչներ, գիտնականներ, փորձագետներ, բիզնեսի ներկայացուցիչներ և լրագրողներ:
   2) Նոյեմբերի 4–5՝ Հայ–ռուսական (Սլավոնական) համալսարանի Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ կազմակերպված «Ազգային անվտանգության հիմնահարցը (միջգիտաճյուղային տեսանկյուններ)» գիտաժողովին մասնակցել են կենտրոնի ղեկավար Տ. Հարությունյանը և գիտաշխատող Ջ. Մելիքյանը: Ջ. Մելիքյանը հանդես է եկել զեկուցմամբ: Զեկուցումների ժողովածուն լույս կտեսնի 2015 թ.: Կենտրոնի և Սլավոնական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի միջև ձեռք է բերվել համագործակցելու պայմանավորվածություն:
   3) Հոկտեմբերի 19–26՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում կայացած «Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (РИСИ)» ավանդական, արդեն 6-րդ «Երիտասարդ քաղաքագետների ֆորում» խորագիրն էր «ԱՊՀ երկրները՝ նոր միջազգային հարաբերությունների համակարգում»: Ֆորումի ընթացքում Ջ. Մելիքյանը հանդես է եկել զեկուցմամբ՝ նվիրված Վրաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղիներին և հայ-վրացական ներկա ու

ապագա հարաբերություններին: Ջ. Մելիքյանը հանդիպել է ՌՌՀԻ տնօրենին՝ գեներալ-լեյտենանտ Լեոնիդ Ռեշետնիկովին: Հանդիպման ընթացքում քննարկվել են Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի և ՌՌՀԻ-ի միջև հնարավոր համագործակցության ուղիները:

4) Նոյեմբերի 30 – դեկտեմբերի 4՝ ՌԴ Նալչիկ քաղաքում ՌԴ ԱԳՆ-ին կից գործող Հանրային դիվանագիտության Գորչակովի հիմնադրամի կազմակերպած «Կովկասյան երկխոսություն» երիտասարդական–փորձագիտական ֆորումի շրջանակներում Ջ. Մելիքյանը ֆորումի ղեկավարել է հիմնական աշխատանքային կլոր սեղանը, որը նվիրված էր Հարավային Կովկասում առկա հակամարտությունների կարգավորման «ճանապարհային քարտեզների» ստեղծմանը:

5) Դեկտեմբերի 10–14-ը Կենտրոնի ղեկավար Տ. Հարությունյանը, գիտաշխատողներ Ջ. Մելիքյանը և Ա. Սիմավորյանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցելության ընթացքում Արցախի պետական համալսարանի ուսանողների և դասախոսների համար հանդես են եկել դասախոսություններով:

6) Կենտրոնի գիտաշխատող Ա. Սիմավորյանը մասնակցել է «Թուրքիայի տեղեկատվական քաղաքականությունն ու գործնական քայլերը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ», Հայ Կաթողիկե եկեղեցու հաղորդակցության միջոցների 2-րդ (Բ) համագումարին, որը կազմակերպել էին Հայ Կաթողիկե եկեղեցու հաղորդամիջոցների հանձնախումբը և ՀՀ սփյուռքի նախարարությունը (Երևան, 2014 թ. հուլիսի 15):

7) Կենտրոնի ղեկավար Տ. Հարությունյանը ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի պատրաստած Հայաստանի ինովացիոն զարգացման զեկույցի ներկայացմանը (2014 թ. նոյեմբերի 14):

4. Կենտրոնի աշխատակիցները հանդես են եկել հարցազրույցներով (19 հարցազրույց) և մամուլի ասուլիսներով (մամուլի 2 ասուլիս, 7 հեռուստածրագիր/ռադիոհաղորդում):

Ընթացքի մեջ են Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տեղեկատվական շրջաբերականի պատրաստման աշխատանքները, որը լույս կտեսնի 2015 թ. և կներառի կենտրոնի գիտաշխատողների 2014 թ. ընթացքում կատարած հետազոտությունների ամփոփ վերլուծությունները:

3 ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Տնտեսագիտական կենտրոններն են ՀԱՀ Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիրը և ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը:

3.1 ՀԱՀ Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիր

Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիրը[1] հիմնադրվել է 2006 թ.: Կենտրոնն ունի գործադիր կոմիտե՝ կազմված պատվավոր նախագահից (դոկտոր Հարություն Արմենյան), տնօրենից (դոկտոր Արփի Բալյան), փոխնախագահից և քարտուղարից: Կենտրոնն ունի մասնաճյուղեր Գյումրիում, Իջևանում, Ստեփանակերտում, Ձավախքում:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 8-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 5, առանց գիտական աստիճանի՝ 3):

3.2 ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնը հիմնադրվել է 2013 թ.[2]:

Կենտրոնն ունի Գիտական խորհրդատվական խորհուրդ, որի անդամները 9-ն են (որից գիտությունների դոկտոր՝ 5, գիտությունների թեկնածու՝ 4): Խորհրդի նախագահն է ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանը: Կենտրոնի տնօրենն է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սամվել Ավետիսյանը, կենտրոնի գիտական ղեկավարը՝ ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Վարդանյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 9-ն է (որից գիտությունների դոկտոր՝ 1, գիտությունների թեկնածու՝ 5, առանց գիտական աստիճանի՝ 3):

[1] http://trdp.aua.am/
[2] http://www.amberd.am/

Կենտրոնի հետազոտական ծրագրերն են.

1. «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագիր,
2. «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր,
3. «Սոցիալ-տնտեսական հետազոտություններ» ծրագիր,

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է բուհի բյուջեից:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքն են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- ✓ Համալսարանում գիտահետազոտական, գիտակրթական և գիտամեթոդական գործունեության զարգացումը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և անվտանգության ապահովման ոլորտներում հետազոտությունների իրականացումը,
- ✓ Համալսարանի գիտական մտքի համախմբումը,
- ✓ Կրթական գործընթացի հետ գիտական հետազոտությունների կապի ապահովումը,
- ✓ Գիտահետազոտական աշխատանքներին ուսանողների և ասպիրանտների ներգրավումը,
- ✓ Աշխարհի և հայաստանյան առաջատար «ուղեղային կենտրոնների» փորձի ուսումնասիրությունն ու տեղայնացումը,
- ✓ Հետազոտական աշխատանքների արդյունքների առևտրայնացումը,
- ✓ Նորարարական մշակումների իրականացումը,
- ✓ Հետազոտությունների արդյունքների հրապարակայնացումը,
- ✓ Հետազոտական պայմանագրերի և դրամաշնորհների ներգրավումը,
- ✓ Գիտական, ուսումնակրթական սեմինարների և աշխատաժողովների անցկացումը:

«Ամբերդն» իրականացնում է հանրապետության տնտեսության ամենահրատապ հիմնախնդիրների հետազոտական ծրագրեր: Հետազոտություններում ընդգրկվում են ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներ, ասպիրանտներ և ուսանողներ:

Թեև «Ամբերդ» հետազոտական կենտրոնը ձևավորվել և գործում է տնտեսագիտական բուհում, սակայն հետազոտությունները չեն սահմանափակվում միայն տնտեսական ոլորտի ուսումնասիրությամբ՝ ընդգրկելով հիմնախնդիրների ավելի լայն շրջանակ. կենտրոնում իրականացվում են ազգային անվտանգությանը, տարածաշրջանային զարգացումներին, սոցիալական և քաղաքական ոլորտներին, կրթությանն ու գիտությանը նվիրված հետազոտություններ:

«Ամբերդի» հետազոտողների հոդվածները հրատարակվում են Հայաստանի տարբեր գիտական պարբերականներում, ՀՊՏՀ գիտական մա-

տենաշարի պրակներում և ամենամյա գիտագործնական կոնֆերանսի նյութերի ժողովածուներում: Առավել նշանակալի և գործնական կիրառություն ունեցող գիտական արդյունքները ներկայացվում են ՀՀ պետական կառավարման լիազոր մարմիններին և գործարար ոլորտի կազմակերպություններին:

«Ամբերդի» հետազոտական ծրագրերի արդյունքները և նորույթները պարբերաբար քննարկվում են գիտական սեմինարներում, որոնց, ըստ հետաքրքրվածության, մասնակցում են գիտական այլ հաստատությունների ներկայացուցիչներ:

Կենտրոնն ունի համագործակցության լայն շրջանակ: Կենտրոնի գործընկերներն են.

- ✓ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը,
- ✓ ՌԴ Ա. Գորչակովի անվան հանրային դիվանագիտության հիմնադրամը,
- ✓ Սոֆիայի համալսարանի «VIA EVRASIA» հետազոտական կենտրոնը,
- ✓ ՀՀ Բնապահպանության նախարարությունը,
- ✓ ՀՀ Ֆինանսների նախարարությունը,
- ✓ ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը,
- ✓ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,
- ✓ ՀՀ Սփյուռքի նախարարությունը,
- ✓ ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հետ համագործակցության արդյունքներից է սույն մենագրությունը: Ներկայումս կենտրոնում իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման, աշխատանքի և սոցիալական հարցերի, բնապահպանության, կրթության և գիտության, ֆինանսների, գյուղատնտեսության, էկոնոմիկայի, սփյուռքի նախարարությունների առաջարկած թեմաներով դրամաշնորհային գիտական 8 հետազոտություն:

2014 թ. ընթացքում կենտրոնը հրապարակել է 17 կոլեկտիվ մենագրություն («Ամբերդ» մատենաշար), կայք-էջում հրապարակվում են վերլուծականներ, առկա է վիճակագրական տվյալների բազա: Տվյալ ժամանակահատվածում կենտրոնի աշխատակիցները հրապարակել են նաև գիտական 33 հոդված (որից 6-ը՝ միջազգային ամսագրերում):

4 ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Սոցիոլոգիական կենտրոններն են ԵՊՀ տարածաշրջանային ինտեգրման և կոնֆլիկտների լուծման կենտրոնը, ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիան, ԵՊՀ Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոնը և ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնը:

4.1 ԵՊՀ տարածաշրջանային ինտեգրման և կոնֆլիկտների լուծման կենտրոն

Երևանի պետական համալսարանի Տարածաշրջանային ինտեգրման և կոնֆլիկտների լուծման կենտրոնը[1] հիմնադրվել է 1996 թ. ԱՄՆ Կոնեկտիկուտի համալսարանի Սոցիալական աշխատանքի դպրոցի դոկտոր Նենսի Համփֆրեյսի, ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Լյուդմիլա Հարությունյանի, ԱՄՆ Ջորջ Մեյսոն համալսարանի Կոնֆլիկտի վերլուծության և լուծման ինստիտուտի դոկտոր Մուրադ Մուրադյանի շնորհիվ:

Կենտրոնի աշխատակիցների քանակը 1-ն է (առանց գիտական աստիճանի):

Կենտրոնի ֆինանսավորման մասին տեղեկատվություն չկա:

Կենտրոնն աջակցում է տարածաշրջանային ուսումնասիրությունների խնդիրներին ուղղված գիտական գործունեությանը, մասնավորապես՝ Հարավային Կովկասի ինտեգրացիոն գործընթացներին, տարածաշրջանում կոնֆլիկտների կանխարգելմանն ու մեղմացմանը, «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն հասարակության» հիմնահարցերին և ժողովրդավարական փոխակերպումների հնարավորություններին: Կենտրոնի հիմնական նպատակներից է կոնֆլիկտի և խաղաղության հետազոտման մասնագիտական կարողությունների զարգացումը Հայաստանում: Կենտրոնում ամենօրյա աշխատանքներ են կատարվում՝ բարելավելու դասավանդումը, կազմակերպվում են գիտաժողովներ, ամառային դպրոցներ, ստեղծվում դասագրքեր և ուսուցողական նյութեր:

[1] http://ysu.am/faculties/hy/Sociology/section/structure/amb/134

4.2 ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիա

Երևանի պետական համալսարանի Կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիան[1] հիմնադրվել է 2006 թ.: Ղեկավարն է փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լյուդմիլա Հարությունյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 7-ն է (որից գիտությունների դոկտոր՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 5):

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից (2014 թ.՝ 5851,0 հազար դրամ[2], 2015 թ.՝ 6085,0 հազար ՀՀ դրամ[3]): Ֆինանսավորման այլ աղբյուրների մասին տեղեկություն չկա:

Կիրառական սոցիոլոգիայի լաբորատորիայի աշխատանքային գործունեության կիզակետը համալսարանական կրթության տարբեր հիմնախնդիրների ուսումնասիրությունն է, կրթության արդյունավետության բարձրացմանը նպաստող առաջարկներով հանդես գալը: Լաբորատորիայի գործունեության առաջնային ուղղություններից է համալսարանական կրթության որակի մշտադիտարկումը և գնահատումը: Լաբորատորիայի գործունեությունն ուղղված է նաև հետևյալ խնդիրներին.

- ✓ Բարձրագույն կրթական հաստատությունների ինքնակառավարման խնդիրների ուսումնասիրություն,
- ✓ Բարձրագույն կրթության որակի գնահատում և մշտադիտարկում,
- ✓ ԵՊՀ նորարարական ծրագրերի արդյունավետության գնահատում,
- ✓ Հայ սոցիոլոգիական ավանդույթների շրջանակներում հետազոտությունների կոորդինացում և աջակցություն,
- ✓ Սոցիոլոգիայի ամբիոնի պրակտիկաների կազմակերպում,
- ✓ Դասավանդման նոր մեթոդների փորձարկում,
- ✓ Հայ հասարակության արդի հիմնախնդիրների ուսումնասիրություն:

2006 թ.-ից լաբորատորիան իրականացրել է մի շարք ծրագրեր.

- ✓ ԵՊՀ-ում բարձրագույն կրթության որակի մշտադիտարկում և գնահատում, 2008 թ.,
- ✓ Բարձրագույն կրթության որակի գնահատման մեթոդաբանության գնահատում և փորձարկում, 2009 թ.,

[1] http://ysu.am/science/hy/1350281587
[2] http://scs.am/files/byuje_2014.pdf
[3] http://scs.am/uploaded/info/2015-budjet.xls

- ✓ ԵՊՀ հասարակագիտական ֆակուլտետներում մագիստրոսական համակարգի արդյունավետության գնահատում,
- ✓ ԵՊՀ ուսանողի կերպարի ուսումնասիրություն:

Լաբորատորիան ստեղծել է սոցիոլոգիական գրականության շտեմարան Սոցիոլոգիայի ֆակուլտետի իրականացրած ժամանակակից հետազոտությունների հիման վրա: Ստեղծել է նաև սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանական գրականության տվյալների շտեմարան՝ հիմնված Հայաստանի գրադարաններում առկա ժամանակակից հետազոտական գրականության վրա:

4.3 ԵՊՀ Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոն

Երևանի պետական համալսարանի Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոնը[1] հիմնադրվել է 2011 թ. «Միգրացիա և բարձրագույն կրթություն. հմտությունների և կարողությունների զարգացում» ԵՄ Տեմպուս IV ծրագրի շրջանակներում:

Կենտրոնի ղեկավարն է կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասիստենտ, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Արամ Վարտիկյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 3-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 1):

Կենտրոնի ֆինանսավորման մասին տեղեկություն չկա:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքն են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- ✓ Տեղեկատվական On-line platform–ի ստեղծում՝ ուղղված միգրացիայի բնագավառում գիտահետազոտական կենտրոնների և մասնագետների միջև արդյունավետ համագործակցության ապահովմանը և խթանմանը:
- ✓ ՀՀ մասնագիտական հանրությանը, պետական մարմիններին, կազմակերպություններին գիտական և հետազոտական գրականության, արդիականացվող տվյալներով աշխարհում և տարածաշրջանում միգրացիոն գործընթացի վիճակի, այդ բնագավառում իրականացվող մասնագիտական գործունեության մասին տեղեկությունների տրամադրում:
- ✓ Միգրացիոն իրավիճակի մշտադիտարկման ապահովում և կանխատեսում:

[1] http://mcc.ysu.am/hy/

- ✓ Գիտական խորազնին ուսումնասիրությունների նախաձեռնում ու իրականացում:
- ✓ Առաջատար արտասահմանյան կենտրոնների նորագույն գիտական, հետազոտական նվաճումների և փորձի վրա հենվելով՝ հայաստանյան միգրացիոն իրականության բազմակողմանի, հեռանկարային ուսումնասիրություններն իրականացնելուն ուղղված կիրառական գործիքակազմի ստեղծում:
- ✓ Սեմինարների, կլոր սեղանների, քննարկումների կազմակերպում:
- ✓ Թրեյնինգների, դասընթացների կազմակերպում:

Կենտրոնը համագործակցում է հետևյալ կայքերի և կենտրոնների հետ.

http://migrationobservatory.ox.ac.uk/
http://armstat.am/en/
http://www.smsmta.am/
http://www.imiscoeconferences.org/contact-office
http://www.gesis.org/en/home/
https://dbk.gesis.org
www.cnrs.fr
urmis.unice.fr
http://www.migracje.uw.edu.pl/
http://www.goethe.de/
www.iom.int/
www.un.am/en/ILO
http://unfpa.am/en/unfpa-co-team
http://osce.org/
http://www.migrationpolicy.org/
http://cmsny.org/
www.crrc.am
http://www.luc.edu/
www.nise.eu
http://www2.unine.ch/
http://sociology.princeton.edu/
http://www.mmg.mpg.de/
http://muse.jhu.edu/
http://onlinelibrary.wiley.com/
http://www.peggylevitt.org/
http://www.emmir.org/index.php
www.census.gov
www.fms.gov.ru

4.4 ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն

Երևանի պետական համալսարանի Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնը[1] հիմնադրվել է 2013 թ. մայիսի 7-ին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Հայաստանում գենդերային հավասարության ապահովման և կանանց հնարավորությունների ընդլայնման» եռամյա ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Արիզոնայի պետական համալսարանի Մելիքյան կենտրոնի և Արիզոնայի պետական համալսարանի Սոցիալական փոխակերպումների դպրոցի հետ համագործակցությամբ:

Կենտրոնի ղեկավարն է սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, Հայաստանում Կանանց ռեսուրսային կենտրոնի համահիմնադիր Գոհար Շահնազարյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 4-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 2):

Կենտրոնի ֆինանսավորման մասին տեղեկատվություն չկա:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքն են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- Բարձրացնել հայ հասարակությունում գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և ազդեցություն ունենալ գենդերային հարցերին վերաբերող քաղաքականության վրա խորհրդատվական, հետազոտական, իրավունքների և շահերի պաշտպանության ու հանրային գործունեության շնորհիվ:
- Նոր ընդլայնված և համակարգված ուսումնական ծրագրի միջոցով ուսանողներին ապահովել կանանց և գենդերային ուսումնասիրությունների վերաբերյալ կատարելագործված թրեյնինգներով:
- Համագործակցել ԵՊՀ կարիերայի և շրջանավարտների կենտրոնի հետ, որը մասնագիտանում է կարիերայի զարգացմանը նպաստող սեմինարների և դասընթացների իրականացման մեջ, որը կօգնի կանանց կրթական կապիտալի իրացմանը կարիերայում, ինչպես նաև մասնագիտական ու քաղաքական առաջնորդության դաշտում:
- Զարգացնել կայուն հանրային ռազմավարություն, որը կապ կստեղծի Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի ու կանանց ՀԿ-ների, պետական և միջազգային կազմա-

[1] http://www.ysu.am/gender/

կերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև Երևանում և նրա սահմաններից դուրս:

- Մասնավոր և պետական սեկտորում մասնագիտական առաջխաղացում փնտրող հայ կանանց համար ձևավորել մասնագիտական ցանց և վերապատրաստվելու այլ հնարավորություններ, ինչպես նաև կազմակերպել գիտաժողովներ և քննարկումներ:
- Որպես հետազոտական կենտրոն՝ ծառայել գենդերային հավասարության ու կանանց առաջնորդության հիմնախնդիրներին վերաբերող հետազոտությունների ու պետական քաղաքականության առաջխաղացմանը:

Կենտրոնի գործընկերներն են.

- ✓ Արիզոնայի պետական համալսարանը (ԱՊՀ),
- ✓ ԱՊՀ Մելիքյան կենտրոնը,
- ✓ Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ),
- ✓ ԱՄՆ Միջզգային զարգացման գրասենյակը (USAID),
- ✓ Բարձրագույն կրթության զարգացման ծրագիրը (HED):

Կենտրոնը հրատարակում է հոդվածներ, ունի նաև On-line հրապարակումներ և կրթական նյութեր:

2013 թ. սկսած՝ Կենտրոնը հրապարակում է գիտական լրատու: Տպագրվում է տարեկան երկու անգամ:

Ըստ ԵՊՀ 2013–2014 թթ. գործունեության հաշվետվության՝ 2013–2014 թթ. հրապարակվել է 9 հոդված:

5 ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Հոգեբանական կենտրոններն են ԵՊՀ Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիան, ԵՊՀ Փորձարարական հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիան, ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոնը, ՀՍ «Ուրարտու» համալսարանի Կիրառական վարքային վերլուծության կենտրոնը, ԵՊՀ Անձ և սոցիալական միջավայր գիտահետազոտական լաբորատորիան, ՀՍ «Ուրարտու» համալսարանի Ընտանիքի հետազոտման և աջակցության կենտրոնը և ՀՀՊԿԱ Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիան:

5.1 ԵՊՀ Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա

Երևանի պետական համալսարանի Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիան[1] հիմնադրվել է 1979 թ. ԵՊՀ կառույցում և կոչվել է «Ինժեներական հոգեբանության լաբորատորիա», 2006 թ. վերանվանվել է «Անձի և մասնագիտական գործունեության գիտահետազոտական լաբորատորիա»:

Լաբորատորիայի ղեկավարն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուբեն Աղուզումցյանը:

Լաբորատորիայի աշխատակիցների ընդհանուր քանակը 6-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 4, առանց գիտական աստիճանի՝ 2):

Կենտրոնի ֆինանսավորման մասին տեղեկատվություն չկա:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքն են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- ✓ Անձի գործունեության հուսալիությունն ապահովող հոգեբանական գործոնների հետազոտում,
- ✓ «Անձի հոգեբանական անվտանգություն» հասկացության ուսումնասիրում և հստակեցում, ուսանողի անձի հոգեբանական անվտանգություն,
- ✓ Մասնագիտական ընտրության, կողմնորոշման և ինքնիրացման գործընթացների հոգեբանական հետազոտում,
- ✓ Անձի հոգեբանական անվտանգության ապահովում մասնագիտական գործունեության մեջ,
- ✓ Հոգեբանական անվտանգության գնահատման մեթոդների մշակում և տեղայնացում:

5.2 ԵՊՀ Փորձարարական հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա

Երևանի պետական համալսարանի Փորձարարական հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիան[2] հիմնադրվել է 2005 թ.: Ղեկավարն է հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Ավանեսյանը:

[1] http://ysu.am/science/hy/1350281632
[2] http://ysu.am/science/hy/1350282331

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 6-ն է (որից գիտությունների դոկտոր՝ 1, գիտությունների թեկնածու՝ 3, առանց գիտական աստիճանի՝ 2):

Կենտրոնի ֆինանսավորման մասին տեղեկատվություն չկա:

Լաբորատորիայի հետազոտությունների հիմնական առանցքն են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- ✓ Կիրառական հոգեբանության բնագավառում փորձարարական հետազոտությունների մեթոդաբանության հիմնահարցի հետազոտում,
- ✓ Փորձարարական հետազոտության մեթոդների կատարելագործման և ներդրման օրինաչափությունները հոգեբանության կիրառական բնագավառներում,
- ✓ Հոգեախտորոշման համակողմանի մոդելի մշակումն ու կիրառումը հոգեբանական հետազոտություններում,
- ✓ Հոգեախտորոշման թեստերի համակարգչային փաթեթների ստեղծում,
- ✓ Հոգեբանական թեստերի մշակում, սոցիալ-մշակութային տեղայնացում,
- ✓ Ավագ դպրոցականի և ուսանողի առողջ ապրելակերպի դրդապատճառների ձևավորման հիմնախնդիրներ,
- ✓ Բարձր նվաճումների, զանգվածային և առողջարարական սպորտի զարգացման գիտակիրառական հիմնահարցեր,
- ✓ Գործունեության պրոֆեսիոգրաֆիկական և հոգեգրաֆիկական ուսումնասիրություն և օրինաչափությունների պարզում:

Բացի դրանից՝ փորձարարական հոգեբանության լաբորատորիայի գործունեության խնդիրներն են.

- ✓ Հետազոտության առարկային համապատասխան մեթոդների մշակումը,
- ✓ Փորձարարական հետազոտության կազմակերպման սկզբունքների մշակումը՝ պլանավորումը, անցկացումը և մեկնաբանումը,
- ✓ Հոգեբանական գիտափորձի, էմպիրիկ հետազոտությունների և ախտորոշիչ մեթոդների ներդրման յուրահատուկ ռազմավարության մշակումը՝ կիրառական հոգեբանության բնագավառներին համապատասխան,
- ✓ Հոգեբանական չափումների գիտական մեթոդների մշակումը,
- ✓ Հոգեախտորոշման մեթոդիկաների տեղայնացումը և հարմարեցումը, ինչպես նաև ստացված արդյունքների հիման վրա շտեմարանների կազմումը,
- ✓ Հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների արդիական ծրագրերի մշակում և արդյունքների կիրառում:

Միջազգային համագործակցություն, դրամաշնորհներ.

01.07.2013 թ-ից՝ դրամաշնորհ «Անձի տարածական կողմնորոշման ձևավորման առանձնահատկությունները արդի տեղեկատվական միջավայրում», ՀՀ ԿԳՆ, ԳՊԿ, 13-5A423,

2011–2013 թթ.՝ դրամաշնորհ «Հոգեբանական թեստային համակարգի մշակում ՀՀ ոստիկանության համակարգի համար», ԵԱՀԽ երևանյան գրասենյակ, OSCE, PO. 226723,

01.03.2011.–01.03.2013 թթ.՝ դրամաշնորհ «Անձի տարածաժամանակային ընկալման դրսևորման առանձնահատկությունները և դրա կարգավորումը անհատական ու սոցիալ-հոգեբանական մակարդակներում», ՀՀ ԿԳՆ, ԳՊԿ, 11 – 5a563:

5.3 ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոն

Երևանի պետական համալսարանի Կիրառական հոգեբանության կենտրոնը[1] հիմնադրվել է 2008 թ.:

Կենտրոնի ղեկավարն է սոցիալական հոգեբանության ամբիոնի դասախոս Դավիթ Գևորգյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 12-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 5, առանց գիտական աստիճանի՝ 7):

Կենտրոնի ֆինանսավորման մասին տեղեկատվություն չկա:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքն են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- ✓ Ուսուցողական գործունեություն,
- ✓ Կորպորատիվ թրենինգներ,
- ✓ Անձնային աճի թրենինգներ,
- ✓ Հոգեթերապիա և հոգեբանական խորհրդատվություն,
- ✓ Ձարգացնող անհատական և խմբային աշխատանքներ երեխաների հետ,
- ✓ Սուպերվիզիա,
- ✓ Գիտահետազոտական աշխատանքներ:

Ըստ ԵՊՀ 2013–2014 թթ. գործունեության հաշվետվության՝ 2013–2014 թթ. հրապարակվել է 14 հոդված:

[1] http://ysu.am/psy/

5.4 ՀՍ «Ուրարտու» համալսարանի Կիրառական վարքային վերլուծության կենտրոն

Հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի Կիրառական վարքային վերլուծության կենտրոնը[1] հիմնադրվել է 2009 թ. հոգեբանական գիտությունների դոկտոր Սեդրակ Սեդրակյանի կողմից: Ղեկավարն է Սեդրակ Սեդրակյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 7-ն է, որից.

- ✓ վարչական աշխատակիցներ՝ 4 (գիտությունների դոկտոր՝ 1, գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 1),
- ✓ մշտական (հաստիքային) հետազոտողներ՝ 7 (գիտությունների դոկտոր՝ 1, գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 1),
- ✓ հրավիրյալ հետազոտող (փորձագետ)՝ 1 (գիտությունների դոկտոր):

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է բուհի միջոցներով:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքը կիրառական վարքաբանական վերլուծությունն է:

5.5 ԵՊՀ Անձ և սոցիալական միջավայր գիտահետազոտական լաբորատորիա

Երևանի պետական համալսարանի «Անձ և սոցիալական միջավայր» գիտահետազոտական կենտրոնը[2] հիմնադրվել է 2011 թ. ԵՊՀ Գիտական խորհրդի որոշմամբ:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 6-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 4):

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից (2014 թ.՝ 3550,0 հազար դրամ[3], 2015 թ.՝ 3692,0 հազար ՀՀ դրամ[4]): Ֆինանսավորման այլ աղբյուրների մասին տեղեկություն չկա:

«Անձ և սոցիալական միջավայր» գիտահետազոտական լաբորատորիայի հետազոտությունների հիմնական ուղղություններն են անձի ոսումնա-

[1] Տվյալները բերված են ըստ հետազոտական խմբի գրությանը բուհից ուղարկված պատասխանի:
[2] http://ysu.am/science/hy/1350282636
[3] http://scs.am/files/byuje_2014.pdf
[4] http://scs.am/uploaded/info/2015-budjet.xls

սիրման ժամանակակից մեթոդիկաների տեղայնացումը և հայերեն մեթոդիկաների մշակումը, սոցիալ–մշակութային փոփոխման պայմաններում անձի արժեքների, համոզմունքների և նույնականացման միտումների ուսումնասիրությունը:

Լաբորատորիայում իրականացվում է ASCN ծրագրով ֆինանսավորվող արտասահմանյան դրամաշնորհ՝ Values, Beliefs and Social Behavior: Dynamics and Specifics in Modern Armenian Society: Ծրագիրն ուղղված է ժամանակակից հայ հասարակությունում արժեքային կողմնորոշումների ու համոզմունքների դրսևորման և դինամիկայի առանձնահատկությունների և դրանց՝ սոցիալական դիրքորոշումների ու վարքի վրա ազդեցության ուսումնասիրմանը:

5.6 ՀՍ «Ուրարտու» համալսարանի Ընտանիքի հետազոտման և աջակցության կենտրոն

Հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի Ընտանիքի հետազոտման և աջակցության կենտրոնը[1] հիմնադրվել է 2013 թ. հոգեբանական գիտությունների դոկտորներ Սեդրակ Սեդրակյանի և Սյուզան Սմիթի կողմից: Ղեկավարն է հոգեբանական գիտությունների դոկտոր Սեդրակ Սեդրակյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 7-ն է, որից.

- ✓ վարչական աշխատակիցներ՝ 4 (գիտությունների դոկտոր՝ 1, գիտությունների թեկնածու՝2, առանց գիտական աստիճանի՝ 1),
- ✓ մշտական (հաստիքային) հետազոտողներ՝ 7 (գիտությունների դոկտոր՝ 1, գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 1),
- ✓ հրավիրյալ հետազոտող (փորձագետ)՝ 1 (գիտությունների դոկտոր):

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է բուհի միջոցներով:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքը ընտանիքի հոգեբանության վերլուծությունն է:

Կենտրոնը 2014 թ. հրատարակել է Sedrak Sedrakyan “Family Psychology”, published by mania+studios LLC, Las Vegas, USA, March 2014. հետազոտությունը:

[1] Տվյալները բերված են ըստ հետազոտական խմբի գրությանը բուհից ուղարկված պատասխանի:

5.7 ՀՀ ՊԿԱ Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա

«Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա» ծրագիրն[1] իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի միջև կնքված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրերի շրջանակներում: Լաբորատորիան հիմնադրվել է 2014 թ.: Ղեկավարն է հոգեբանական գիտությունների թեկնածու Ռուբեն Աղուզումցյանը:

Լաբորատորիայի աշխատակիցների ընդհանուր քանակը 4-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 2):

2014 թ. «Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա» ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. Ուսումնասիրվել են կառավարչական տարբեր աստիճանի պաշտոններ և դասակարգվել ըստ դրանց հոգեբանական նմանության: Ուսումնասիրության արդյունքում դասակարգվել են կառավարչական գործունեության մասնագիտությունները:
2. Կազմվել են կառավարչական տարբեր աստիճանի պաշտոնի բնութագրերը (պրոֆեսիոգրամա և պսիխոգրամա):
3. Կազմվել է մասնագիտական կարևոր որակների գնահատման մեթոդական փաթեթը, որի հարմարեցման գործընթացը Հայաստանի համար ընթացքի մեջ է:
4. 2014 թ. մայիսի 27-ից հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանում է գտնվել թեմայի օտարերկրյա խորհրդատուն՝ Ա. Ա. Օբոզնովը: Կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ գիտական թեմայի վերաբերյալ, իրականացվել է փորձի փոխանակում, մշակվել է հետագա համագործակցության ռազմավարությունը:
5. Լաբորատորիայի գիտական ղեկավար Ռ. Վ. Աղուզումցյանը գործուղվել է Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաք՝ մասնակցելու «Բարձրագույն դպրոց. փորձ, խնդիրներ, հեռանկարներ» VII

[1] Տվյալները բերված են ըստ հետազոտական խմբի գրությանը բուհից ուղարկված պատասխանի:

միջազգային գիտագործնական գիտաժողովի աշխատանքներին, որը կազմակերպել է Ազգերի բարեկամության ռուսական համալսարանը: Ռ. Վ. Աղուզումցյանը ղեկավարել է գիտաժողովի 3-րդ սեկցիան, ելույթ է ունեցել գիտական զեկուցմամբ:

6. Գործուղման շրջանակներում Ռ. Վ. Աղուզումցյանը հանդիպել է Ակադեմիայի գործընկեր ՌԴ Ազգային ակադեմիայի հոգեբանության ինստիտուտի տնօրեն, ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Ա. Ժուրավլյովի և «Էրգոնոմիկայի և ինժեներական հոգեբանության» լաբորատորիայի գիտական ղեկավար, պրոֆեսոր Ա. Օբոզնովի հետ:
7. Լաբորատորիայի գիտաշխատողները տպագրել են գիտական հոդվածներ և ձեռնարկ:
8. Պատրաստվել և տպագրության է հանձնվել մեկ մենագրություն՝ «ՀՀ հանրային ծառայողների պատրաստման հոգեբանական համակարգի հայեցակարգային հիմունքները» (հեղինակ՝ բժշկ. գիտ. թեկն. Ա. Լոքյան):

6 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Բնապահպանական-առողջապահական կենտրոններն են ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոնը, ՀԱՀ Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոնը և ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի կենտրոնը:

6.1 ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոն

Հայաստանի ամերիկյան համալսարանի Հակոբյան բնապահպանական կենտրոնը[1] հիմնադրվել է 1992 թ.: 2008 թ. Շրջակա միջավայրի պահպանության հետազոտական կենտրոնը վերանվանվեց «Հակոբյան բնապահպանական կենտրոն»: Հիմնադիրն է Սարգիս Հակոբյանը:

Կենտրոնն ունի տնօրեն (Ալեն Ամիրխանյան), գլխավոր փորձագետ, համակարգող:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 3-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 1):

[1] www.ace.aua.am

Կենտրոնը ֆինանսավորվում է հիմնականում դոնորների նվիրատվություններից: Վերջիններս ամբողջովին ազատվում են հարկերից: Ընդհանուր նվիրատվություններ կարելի է կատարել 2 դոլարի չափով: Կան նաև առանձին նախագծեր, որոնց համար նվիրատվության չափը ֆիքսված է: Օրինակ՝ «Թռչուններն՝ իմ բակում» 10–14 տարեկան աշակերտների ուսուցման ծրագրի նվիրատվության չափը 100 դոլար է, Երևանի հազվագյուտ «բնակիչ» եվրոպական ճնճղաճուռակի ուսումնասիրությանը և պաշտպանությանը աջակցելու նվիրատվության գումարը 250 դոլար է:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքն են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- ✓ Բնապահպանական քաղաքականություն,
- ✓ Բնական ռեսուրսների կայուն կառավարում,
- ✓ Շինությունները և բնական միջավայրը,
- ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաները և բնական միջավայրը,
- ✓ Հետազոտական, կրթական ծրագրերի իրականացում Հայաստանի կենսաբազմազանության և բնական ռեսուրսների պահպանման նպատակով,
- ✓ Համագործակցություն բնապահպանական այլ կազմակերպությունների հետ:

6.2 ՀԱՀ Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոն

Հայաստանի ամերիկյան համալսարանի Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոնը[1] հիմնադրվել է 1995 թ.: Կենտրոնի ղեկավարն է բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վարդուհի Պետրոսյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 13-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 4, առանց գիտական աստիճանի՝ 9, որից 8-ը մագիստրոս):

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքն են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- ✓ ՀԱՀ հանրային առողջապահության մագիստրատուրայի ծրագրի ուսանողներին հետազոտությունների և ծրագրերի զարգացման ուսուցմամբ ապահովում,

[1] http://www.auachsr.com

- ✓ ՀՀ առողջապահության նախարարության և մարդասիրական կազմակերպությունների ու այլ ինստիտուտների, գործակալությունների համագործակցություն,
- ✓ Տեխնիկական աջակցություն հայաստանյան նախարարություններին և հետազոտական կենտրոններին,
- ✓ ՀՀ նախարարությունների հետ համատեղ մարզերում առողջապահական ծառայությունների զարգացման խթանում,
- ✓ Երկրում առողջապահական ծրագրերի գնահատմամբ և իրականացմամբ հետաքրքրված միջազգային կազմակերպություններին տեխնիկական աջակցության ցուցաբերում:

Բազմաթիվ կազմակերպություններ կնքել են Կենտրոնի հետ համատեղ ծրագրերի իրականացման ծառայությունների մատուցման գործարք: Դրանցից կարելի է նշել՝

- ✓ Հայ բժշկական համաշխարհային վարչությունը,
- ✓ Ամերիկյան Միջազգային «Կարմիր խաչ»-ը,
- ✓ Ջորջթաունի համալսարանի Վերարտադրողական առողջության ինստիտուտը,
- ✓ Բաց հասարակության ինստիտուտը (OSI),
- ✓ Փենսիլվանիայի համալսարանում Բուժքույրերի դպրոցը (School of Nursing)
- ✓ ՅՈՒՆԻՍԵՖ-ը,
- ✓ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գրասենյակը (ԱՄՆ ՄԶԳ) Հայաստանում USAID),
- ✓ Վորլդ Վիժն Հայաստանը:

6.3 ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի կենտրոն

Երևանի պետական համալսարանի Էկոլոգիական իրավունքի կենտրոնը[1] հիմնադրվել է 2008 թ. սեպտեմբերի 16-ին ԵՊՀ-ի և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի հիման վրա: 2010 թվականից Կենտրոնը գործում է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի ծրագրի շրջանակներում:

Կենտրոնի ղեկավարն է իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Աիդա Իսկոյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 7-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 2, առանց գիտական աստիճանի՝ 5):

[1] http://www.elrc.ysu.am/

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից (2014 թ.՝ 6826,3 հազար դրամ[1], 2015 թ.՝ 7099,4 հազար ՀՀ դրամ[2]): Ֆինանսավորման այլ աղբյուրների մասին տեղեկատվություն չկա:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքն են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- ✓ ՀՀ էկոլոգիական օրենսդրության գնահատում,
- ✓ Էկոլոգիական իրավունքի տարբեր ինստիտուտների վերաբերյալ հետազոտությունների իրականացում,
- ✓ Վերապատրաստման դասընթացների և հանրային դասախոսությունների անցկացում,
- ✓ Իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների կազմակերպում,
- ✓ «Էկոլոգիական իրավունք» դասընթացի համար ուսումնամեթոդական նյութերի նախապատրաստում,
- ✓ Պետական կառավարման մարմիններին, գործարար ոլորտի ներկայացուցիչներին և հասարակական կազմակերպությունների խորհրդատվության տրամադրում:

Կենտրոնի գործընկերներն են.

- *Գիտահետազոտական կառույցներ*

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետը
ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը

- *Պետական մարմիններ*

ՀՀ Ազգային ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողովը
ՀՀ բնապահպանության նախարարությունը
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը
ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը

- *Միջազգային կազմակերպություններ*

Բնության պահպանության համաշխարհային միության Էկոլոգիական իրավունքի ակադեմիան
ՄԱԿ, ԵՏՀ, Օրհուսի կոնվենցիայի քարտուղարությունը

- *Հասարակական կազմակերպություններ*

Կայուն ջրային միջավայր ՀԿ
Սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա ՀԿ
Հանուն մարդկային կայուն զարգացման ՀԿ
Հայաստանի Էկոտուրիզմի Ասոցացիա ՀԿ

[1] http://scs.am/files/byuje_2014.pdf
[2] http://scs.am/uploaded/info/2015-budjet.xls

- *Գործարար ոլորտ*

Դինո Գոլդ Մայնինգ ՓԲԸ

«Վալլեքս» Խմբի ընկերություններ

Կենտրոնը հրապարակում է «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի պարբերականը»: Տպագրվում է տարեկան չորս անգամ:

Ըստ ԵՊՀ 2013–2014 թթ. գործունեության հաշվետվության՝ 2013–2014 թթ. հրապարակվել է 1 ուսումնական ձեռնարկ, 6 հոդված, զեկուցումների 1 թեզիս:

7 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Տեղեկատվական-ռազմավարական կենտրոններն են ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիան, ԵՊՀ Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների լաբորատորիան և ՀՌՀ Ազգային անվտանգության ոլորտում ռազմավարական հետազոտությունների լաբորատորիան:

7.1 ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիա

Երևանի պետական համալսարանի Ռազմավարական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիան[1] հիմնադրվել է 2014 թ. ԵՊՀ գիտական խորհրդի կողմից: Ղեկավարն է ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախոս Ալվինա Աղաբաբյանը:

Լաբորատորիայի աշխատակիցների ընդհանուր քանակը 3-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 1, առանց գիտական աստիճանի՝ 2):

Լաբորատորիայի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական

[1] Տե՛ս ԵՊՀ 2013-2014 ուստարվա գործունեություն, էջ 781-783, http://documentation.ysu.am/wp-content/themes/easel/uploads/2013-2014_%D5%B8%D6%82%D5%BD%D5%BF%D5%A1%D6%80%D5%BE%D5%A1_%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B62.pdf

բյուջեից (2014 թ.՝ 6000,0 հազար դրամ[1], 2015 թ.՝ 6240,0 հազար ՀՀ դրամ[2]): Ֆինանսավորման այլ աղբյուրների մասին տեղեկատվություն չկա:

Լաբորատորիայի հետազոտությունների հիմնական առանցքն են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- ✓ Ներքին և արտաքին միջավայրում հակահայկական քարոզչության հիմնական ուղղությունների և դրույթների ուսումնասիրություն և հակաքարոզչության կազմակերպում,
- ✓ Տեղեկատվության ներքին հոսքերի մշտադիտարկում, տեղեկածին վտանգների բացահայտումը և դրանց դեմ պայքարի մեթոդաբանության մշակում,
- ✓ Հասարակության մեջ սոցիալական (հատկապես ազգային անվտանգության տեսակետից վտանգավոր) դիրքորոշումների ձևավորման աղբյուրների, մեխանիզմների և տարածման ճանապարհների ուսումնասիրություն, հակազդման մեխանիզմների մշակում,
- ✓ Հայկական ինքնության ձևավորման հարցում լրատվամիջոցների դերի ուսումնասիրություն,
- ✓ Արցախի և արցախյան հիմնախնդրի, բանակի, հայրենիքի, պետության և այլ պետականապահպան միավորներին առնչվող առկա սոցիալական դիրքորոշումների ուսումնասիրություն,
- ✓ ՋԼՄ-ների միջոցով սոցիալական դիրքորոշման ձևավորման մեխանիզմների, դրանց կառուցվածքի, առաջացման և փոփոխման նախապայմանների ուսումնասիրում և զանգվածային հաղորդակցության միջոցների ազդեցության և դրա հնարավոր հետևանքների ուսումնասիրում:

Ըստ ԵՊՀ 2013–2014 թթ. գործունեության հաշվետվության՝ 2013–2014 թթ. հրապարակվել է 1 մենագրություն:

7.2 ԵՊՀ Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների լաբորատորիա

Երևանի պետական համալսարանի Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների լաբորատորիան հիմնադրվել է 2015 թ. հունվարի 21-ին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ: Լաբորատորիայի ղեկավարն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սեդա Գասպարյանը:

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջե-

[1] http://scs.am/files/byuje_2014.pdf
[2] http://scs.am/uploaded/info/2015-budjet.xls

ից (2015 թ.՝ 3042,0 հազար ՀՀ դրամ[1]): Ֆինանսավորման այլ աղբյուրների մասին տեղեկություն չկա:

7.3 ՀՌՀ Ազգային անվտանգության ոլորտում ռազմավարական հետազոտությունների լաբորատորիա

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի Ազգային անվտանգության ոլորտում ռազմավարական հետազոտությունների լաբորատորիան[2] հիմնադրվել է 2015 թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության գի-տության պետական կոմիտեի աջակցությամբ: Ղեկավարն է քաղաքագիտության ամբիոնի վարիչ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հովհաննես Սարգսյանը:

Լաբորատորիայի աշխատակիցների ընդհանուր քանակը 5-ն է (որից գիտությունների դոկտոր՝ 1, գիտությունների թեկնածու՝ 3, առանց գիտական աստիճանի (ասպիրանտ)՝ 1):

Լաբորատորիայի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից (2015 թ.՝ 2912,1 հազար ՀՀ դրամ[3]): Ֆինանսավորման այլ աղբյուրների մասին տեղեկություն չկա:

Լաբորատորիայի հետազոտությունների գլխավոր նպատակն է համակարգել միջգիտական ուսումնասիրություններն ազգային անվտանգության ոլորտում, իսկ հիմնական առանցքն են հետևյալ խնդիրները.

- ✓ Ճշգրտել հիմնական հասկացական ապարատը,
- ✓ Ժամանակակից հիմնախնդիրների դիրքերից քննադատորեն իմաստավորել ռազմավարական մտքի պատմությունը,
- ✓ Տեսականորեն իմաստավորել ազգային անվտանգության ժամանակակից մոդելները,
- ✓ Ուսումնասիրել «ռազմավարական մշակույթների» հայեցակարգի տեսական-մեթոդաբանական և գործնական նշանակությունն ազգային անվտանգության հետազոտությունների համատեքստում,
- ✓ Գնահատել ժամանակակից ինտեգրացիոն գործընթացներն ազգային անվտանգության առաջնահերթությունների տեսանկյունից,

[1] http://nslab.rau.am/rus

[2] Տե՛ս ԵՊՀ 2013-2014 ուստարվա գործունեություն, էջ 781-783, http://documentation.ysu.am/wp-content/themes/easel/uploads/2013-2014_%D5%B8%D6%82%D5%BD%D5%BF%D5%A1%D6%80%D5%BE%D5%A1_%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B62.pdf

[3] http://scs.am/uploaded/info/2015-budjet.xls

- ✓ Բացահայտել ազգային նույնականության՝ որպես ազգային անվտանգության գործոնի պահպանման ժամանակակից մեխանիզմները,
- ✓ Լուսաբանել տարածաշրջանային անվտանգության սպառնալիքները, գիտական վերլուծության մակարդակում բացահայտել ադրբեջանական գործոնի տեղը ՀՀ ազգային անվտանգության, տարածաշրջանային և գլոբալ անվտանգության համատեքստում,
- ✓ Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա պարբերաբար առաջարկություններով դիմել համապատասխան պետական հաստատություններ:

Լաբորատորիայի հետազոտական գործունեության ուղղություններն են ուսումնասիրությունների տեսական-մեթոդաբանական հիմքերի մշակումն ու ճշգրտումը, ազգային անվտանգության հիմնախնդրի ուսումնասիրությունը ժամանակակից ինտեգրացիոն գործընթացների համատեքստում, տարածաշրջանային անվտանգության ուսումնասիրությունը:

2015 թ. ապրիլի 27-ին լաբորատորիայում կազմակերպվել է հայոց ցեղասպանության հարցերին նվիրված կլոր սեղան՝ «Հայերի ցեղասպանությունը. հիշողություն և ապագայի դասեր» խորագրով:

8 ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Գիտակրթական կենտրոններն են ԵՊԼՀ Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոնը և ՀՀՊԿԱ Գիտության կառավարման հետազոտական կենտրոնը:

8.1 ԵՊԼՀ Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոն

Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոնը[1] հիմնադրվել է 2010 թ. համալսարանի գիտական խորհրդի կողմից: Ղեկավարն է Աննա Ազարյանը: Կենտրոնի ղեկավարը Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի համակարգող անձն է Հայաստանում:

Կենտրոնն ունի կառավարման մարմին՝ ի դեմս ԵՊԼՀ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի:

[1] Տվյալները բերված են ըստ հետազոտական խմբի գրությանը բուհից ուղարկված պատասխանի:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր թվաքանակը 2-ն է:

Կենտրոնի առաքելությունն է նպաստել ժամանակակից լեզուների ուսումնառության, դասավանդման և գնահատման ոլորտում ԵԽ գաղափարախոսության և հիմնարար արժեքների տարածմանը, ներդրմանը և ներդաշնակեցմանը ՀՀ բարձրագույն կրթության համակարգին:

Կենտրոնի նպատակներն են.

- ✓ Նպաստել ԵԽ լեզվակրթությանն առնչվող իրավական և ուսումնամեթոդական փաստաթղթերի մասին իրազեկմանը և դրանց տարածմանը ԵՊԼՀ-ում և ՀՀ բարձրագույն կրթության համակարգում,
- ✓ Նպաստել ԵԽ լեզվակրթությանն առնչվող ուսումնամեթոդական փաստաթղթերի, նյութերի և գործիքների հարմարեցմանը և ներդրմանը ԵՊԼՀ–ում և ՀՀ բարձրագույն կրթության համակարգում,
- ✓ Նպաստել ժամանակակից լեզուների ուսումնառության, դասավանդման և գնահատման ոլորտում ԵԽ հետ համագործակցության ընդլայնմանը:

Կենտրոնն իր գործառույթներն իրականացնում է ԵՊԼՀ համապատասխան ամբիոնների և կենտրոնների հետ՝ գործակցելով հետևյալ ոլորտներում.

- ✓ ԵԽ լեզվակրթությանն առնչվող իրավական և ուսումնա-մեթոդական փաստաթղթերի հավաքում, համակարգում և տեղեկատվական շտեմարանի ստեղծում,
- ✓ ԵՊԼՀ և այլ բուհերի պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական կազմի շրջանում ԵԽ լեզվակրթությանն առնչվող տեղեկատվության տարածման նպատակով միջբուհական և բուհական քննարկումների, համաժողովների և գիտաժողովների կազմակերպում,
- ✓ ՀՀ բարձրագույն կրթության համակարգում ԵԽ լեզվակրթությանն առնչվող ուսումնամեթոդական փաստաթղթերի, նյութերի և գործիքների ներդրման հնարավորություններն ու ուղիները սահմանելու նպատակով հետազոտությունների անցկացում,
- ✓ Ոլորտին առնչվող փաստաթղթերի, նյութերի և գործիքների կիրառման վերաբերյալ ուսումնամեթոդական նյութերի /ուղեցույցներ, դասագրքեր, ձեռնարկներ և այլն/ և ժամանակակից նորարարական դասընթացների մշակում,
- ✓ ԵԽ լեզվակրթական ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներին ՀՀ կրթական համակարգի ներկայացուցիչների ներգրավվածությանը նպաստում,
- ✓ Միջազգային համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրերի պատրաստում և ներկայացում Եվրախորհուրդ ու այլ առն-

չակից միջազգային կազմակերպություններ:

2013–2014 թթ. Կենտրոնի կազմակերպած միջազգային համաժողովներ.

- ✓ 2014 թ. հոկտեմբերի 1–3. «Լեզուներին և մշակույթներին բազմակի մոտեցումների համակարգ» խորագրով միջազգային համաժողով ԵՊԼՀ-ում՝ Գրացի Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի «Անդամ երկրների համար վերապատրաստում և խորհրդատվություն» ծրագրի շրջանակներում:
- ✓ 2013 թ. սեպտեմբերի 10–11. «Լեզուներին և մշակույթներին բազմակի մոտեցումների համակարգ» խորագրով միջազգային համաժողով ԵՊԼՀ-ում՝ ԺԼԵԿ փորձագետների մասնակցությամբ:

8.2 ՀՀՊԿԱ Գիտության կառավարման հետազոտական կենտրոն

«Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագիրն[1] իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի միջև կնքված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրերի շրջանակներում: Կենտրոնը հիմնադրվել է 2015 թ.: Ղեկավարն է բժշկական գիտությունների թեկնածու Արսեն Լոքյանը:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր քանակը 7-ն է (որից գիտությունների թեկնածու՝ 3, առանց գիտական աստիճանի՝ 4):

«Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագրի նպատակն է նպաստել.

1. Գիտության և կրթության կառավարման համակարգի հետագա զարգացմանն ու արդիականացմանը,
2. Գիտական հաստատությունների կառավարման գործընթացների բարելավմանը,
3. Գիտության ոլորտի կառավարիչների պատրաստման կարիքների բացահայտմանը, գիտության կառավարման ոլորտի մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

[1] Տվյալները բերված են ըստ հետազոտական խմբի գրությանը բուհից ուղարկված պատասխանի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ՀՀ բուհական հումանիտար-վերլուծական կենտրոնների գործունեության ուսումնասիրությունը՝ ներկայացնենք հետևյալ հիմնական եզրակացությունները.

1. Այս կենտրոններն իրենց գործունեության առկա հիմնախնդիրներով, զարգացման տեմպերով և ռեսուրսներով մասամբ համապատասխանում են ընդունված միջազգային չափանիշներին, թեպետ դեռ ամբողջական չէ պատկերացումն այն մասին, թե ինչպիսին պետք է լինի «ուղեղային կենտրոնը»՝ իր բոլոր չափորոշիչներով:
2. Մեծ է տարբերությունը նաև պետական և ոչ պետական բուհերի միջև, ինչը նույնպես մտահոգության տեղիք է տալիս: Վերջիններս բավարարվում են միայն գիտաուսումնական բաժնի իրականացրած գործառույթներով, որոնք ավելի հաճախ կազմակերպական և համակարգող բնույթ ունեն (նույնը կարելի է ասել նաև որոշ պետական բուհերի մասին):
3. Ցածր է այս կենտրոնների ինտեգրվածության մակարդակը, թույլ են գիտահետազոտական ոլորտում կապերը, շփումները, հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիոմշակութային փոփոխություններին ու մարտահրավերների լուծմանը միտված համատեղ ջանքերը: Մինչդեռ նրանց գլխավոր խնդիրը հենց պետք է լինի հանրապետությունում տեղի ունեցող փոփոխությունների ու զարգացումների արտացոլումը, անհրաժեշտ գիտական հենքով ապահովումը, ուղենիշների ուրվագծումը, քանի որ բուհերն առանցքային դերակատարություն ունեն ոչ միայն գիտելիքների փոխանցման և տարածման, այլև գիտելիքների ստեղծման ու կիրառման մեջ:
4. Բուհական հումանիտար վերլուծական կենտրոններն էապես տարբերվում են միմյանցից թե՛ կառուցվածքային, թե՛ գործունեության թափանցիկության (ՀՀ պետական բյուջե, բուհական հաշվետվություններ, ներկայացվածություն համացանցում) առումներով:
5. Բուհական վերլուծական կենտրոններից կառավարման մարմնի առկայությամբ առանձնանում են.
   - ✓ ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը (Կառավարման խորհուրդ՝ բաղկացած 31 անդամից),
   - ✓ ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը (Գիտական խորհուրդ՝ 27 անդամից),
   - ✓ ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը (Գիտական խորհուրդ՝ 11 անդամից),

- ✓ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (Գիտական խորհրդատվական խորհուրդ՝ 9 անդամից),
- ✓ ԵՊԼՀ Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոնը,
- ✓ ՀԱՀ Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիրը (Գործադիր կոմիտե՝ 4 անդամից):

6. Ուսումնասիրված կենտրոններից կառուցվածքային ստորաբաժանումներ ունեն.
   - ✓ ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը (6 բաժին, 2 լաբորատորիա),
   - ✓ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (3 ծրագիր):
7. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում էբուհական հումանիտար վերլուծական 13 կենտրոն: Թեև ՀՀ պետական բյուջեում ներկայացված են բուհական որոշ կենտրոններ, սակայն նրանց գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, իսկ տեղեկություն ստանալու ամեն մի փորձ (կենտրոններ ուղարկված պաշտոնական գրություններ, անմիջական հարցումներ կենտրոնների ներկայացուցիչներին, բուհերի համապատասխան ստորաբաժանումներին և այլն) մատնվում է անհաջողության:
8. ՀՀ բուհերում գործող որոշ վերլուծական կենտրոնների մասին տեղեկատվություն առկա է բուհի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություններում և ինքնավերլուծություններում: Սակայն այդ փաստաթղթերում նշված կենտրոնների գործունեության վերաբերյալ որևէ այլ տեղեկատվություն չկա, նույնիսկ վերջիններիս առկայության, գործունեության վերաբերյալ հետազոտական խմբի հարցումներին բուհից տրվում է բացասական պատասխան:
9. Համացանցում ներկայացվածությամբ (էլեկտրոնային հասցե, պաշտոնական կայք, էջեր սոցիալական ցանցերում) աչքի են ընկնում.
   - ✓ ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը,
   - ✓ ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը,
   - ✓ ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնը,
   - ✓ ԵՊՀ Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոնը,
   - ✓ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը,
   - ✓ ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոնը,
   - ✓ ՀԱՀ Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոնը,

- ✓ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի Ազգային անվտանգության ոլորտում ռազմավարական հետազոտությունների լաբորատորիան:

Որոշ բուհերում գործող կենտրոնները չունեն առանձին կայքեր, մյուսների կայքերում տեղակայված տեղեկատվությունը հին է, որոշ կենտրոնների կայքերում տեղեկատվությունը պարբերաբար թարմացվում է, բայց ամբողջական չէ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ԿԳՆ ԳՊԿ Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագիր, 2011 թ., http://www.scs.am/files/has-git-zarg-tsragir-jamanakacuyc.pdf
2. ԵՊՀ 2013-2014 ուստարվա գործունեություն, Եր., 2014:
3. 2014 Global Go To Think Tank Index Report, Philadelphia, PA USA, February 4th, 2015.
4. ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված բազային ֆինանսավորման ծավալները, http://scs.am/uploaded/info/2015-budjet.xls
5. «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածով գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի գծով ծախսերի բաշխումը ըստ առանձին իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտների, http://scs.am/files/byuje_2014.pdf
6. ՀՀ կրթության և գիտության նախարարություն, www.edu.am
7. Երևանի պետական համալսարան, http://ysu.am/
8. Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան, http://rau.am/
9. Հայաստանի ամերիկյան համալսարան, http:/aua.am/
10. ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, www.armin.am
11. ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, http://www.ces.am/
12. ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, http://cccsysu.com/
13. ԵՊՀ Եգիպտագիտության հայկական կենտրոն, https://armenianegyptologycentre.wordpress.com/
14. ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոն, http://www.amberd.am/
15. ՀԱՀ Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոն, http://www.auachsr.com

*Հավելված**

N	Կենտրոնի անվանում	Ընդհանուր տվյալներ	Ղեկավար	Աշխատակազմ	Հրապարակում
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ					
1.	ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ *Հեռ.՝* (+374 60) 71 00 92, *Էլ.փոստ՝* info@armin.am *Կայք՝* http://www.armin.am/ *Էջեր սոցցանցերում՝* Facebook և youtube	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ., պրոֆեսոր ***Արամ Սիմոնյան***	54	1 դասագիրք, 5 մենագրութ., 66 հոդված, 16 զեկուցում. թեզիս (2013–2014 թթ.), 1 պարբերական, 2 գիտաժողով (2012 թ.)
2.	ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 *Հեռ.՝* (+374 10) 57 63 26 *Էլ. հասցե՝* info@ces.am *Կայք՝* http://www.ces.am/	ի. գ. թ., դոցենտ ***Արթուր Ղազինյան***	12	2 հետազոտութ. (2013–2014 թթ.), 1 գիտաժողով (2012 թ.)
3.	ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ իրավագիտության ֆակ., 108 սենյակ *Հեռ.՝* (+374 60) 71 02 37 *Էլ. հասցե՝* elrc@ysu.am *Կայք՝* http://www.elrc.ysu.am/	ի. գ. թ., պրոֆեսոր ***Միրա Իսկոյան***	7	1 ուս. ձեռնարկ, 6 հոդված, 1 զեկուցման թեզիս (2013–2014 թթ.), 1 պարբերական, 1 գիտաժողով (2012 թ.)
4.	ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, ԵՊՀ 7-րդ մասնաշենք, 118, 119 լսարաններ *Հեռ.՝* +374 60-71-05-94 *Էլ. հասցե՝* cccs@ysu.am *Կայք՝* http://cccsysu.com/	բ. գ. թ., պրոֆեսոր ***Դավիթ Հովհաննիսյան***	6	5 հոդված, 6 զեկուցում. թեզիս (2013-2014 թթ.), 1 պարբերական

* Հավելվածում ներկայացված է հումանիտար վերլուծական 28 կենտրոնների մասին ամփոփ տեղեկատվություն: ԳՊՀ «Սյունիք» հայագիտական հետազոտությունների կենտրոնի մասին տեղեկատվությունը բացակայում է:

5.	ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, 0025, ԵՊՀ Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, 436 սենյակ *Հեռ .՝* (+374 60) 71 03 90 *Էլ. հասցե՝* cgls@ysu.am, genderlead@yahoo.com *Կայք՝* www.ysu.am/gender/ *Էջեր սոցցանցերում՝* Facebook և blogspot	հ. գ. թ., դոցենտ ***Գոհար Շահնազարյան***	4	9 հոդված, On-line հրապարակումներ, լրատու, 2 գիտաժողով (2013–2014 թթ.)
6.	ԵՊՀ Եգիպտագիտության հայկական կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 *Հեռ.՝* (+374 10) 55-52-40 *Էլ. հասցե՝* egyptology@ysu.am *Կայք՝* www.armenianegyptologycentre.wordpress.com/	եգիպտագիտության, հնագիտության դոկտոր ***Քրիստիան Թութունջյան դր Վարդավան***	3	1 մենագրութ., 2 հոդված
7.	ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Աբովյան 52/ա, ԵՊՀ 8-րդ մասնաշենք, 012 սենյակ *Հեռ .՝* (+374 60) 71 06 31, (+374 60) 71 06 44, (+374 93) 54 4 3 78 *Էլ. հասցե՝* psycenter@ysu.am *Կայք՝* http://ysu.am/psy/	***Դավիթ Գևորգյան***	12	14 հոդված
8.	ԵՊՀ Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան 0025, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակ., 302 սենյակ *Էլ. հասցե՝* mcc@yusu.am *Կայք՝* http://mcc.ysu.am/hy/ *Էջեր սոցցանցերում՝* Facebook, twitter, google+	ս. գ. թ. ***Արամ Վարտիկյան***	3	4 էլեկտրոնային հոդված, 2 գիտաժողով (2014 թ.)
9.	ԵՊՀ Տարածաշրջանային ինտեգրման և կոնֆլիկտների լուծման կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան 0025, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակ. *Կայք՝* http://ysu.am/faculties/hy/Sociology/section/structure/amb/134	փ. գ. դ., պրոֆեսոր ***Լյուդմիլա Հարությունյան***	2	

10.	ԵՊՀ Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների լաբորատորիա	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆեսոր ***Մեղա Գասպարյան***		
11.	ԵՊՀ Անձ և սոցիալական միջավայր գիտահետազոտական լաբորատորիա	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Աբովյան 52 ա *Հեռ .՝* (+374 60) 71 06 38 *Էլ. հասցե՝* persona@ysu.am, n_khachatryan@ysu.am *Կայք՝* http://ysu.am/science/hy/1350282636 http://ysu.am/faculties/hy/Philosophy-and-Psychology/section/structure/amb/118	հ. գ. թ., դոցենտ ***Նարինե Խաչատրյան***	6	
12.	ԵՊՀ Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Աբովյան 52 ա *Հեռ.՝* (+374 60) 71 06 39 *Էլ. հասցե՝* psylabor@ysu.am *Կայք՝* http://ysu.am/science/hy/1350281632	հ. գ. թ., դոցենտ ***Ռուբեն Աղուզումցյան***	6	
13.	ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիա	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 *Հեռ.՝* (+374 60) 71 00 67 *Էլ.հասցե՝* armen_ghazaryan@ysu.am *Կայք՝* http://ysu.am/science/hy/1350281587 http://ysu.am/faculties/hy/Sociology/section/structure/amb/133	փ. գ. դ., պրոֆեսոր *Լյուդմիլա Հարությունյան*	7	4 ծրագիր
14.	ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիա	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 *Էլ. հասցե՝* alvina.aghababyan@gmail.com	***Ալվինա Աղաբաբյան***	3	1 մենագրութ.

15.	ԵՊՀ Փորձարարական հոգեբանության գիտա-հետազոտական լաբո-ռատորիա	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Աբովյան 52 ա *Հեռ .՝* (+374 60) 71 06 37 *Էլ. հասցե՝* psydep@ysu.am *Կայք՝* http://ysu.am/science/hy/1350282331	հ. գ. դ., պրոֆեսոր ***Հրանտ Ավանեսյան***	6	3 դրամաշնորհային ծրագիր
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ					
16.	ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք, *Հեռ.՝*(+37410) 59 34 79 *Էլ.հասցե՝*info@amberd.am *Կայք՝*http://www.asue.am/	տ.գ.դ., պրոֆեսոր ***Սամվել Ավետիսյան***	9	17 կոլեկտիվ մենագրութ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ					
17.	ՀՀ ՊԿԱ Տարածա-շրջանային հետազո-տությունների կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Կիևյան 8 *Հեռ.՝*(374 10) 26 92 59 *Էլ. հասցե՝*info@paara.am, aspa.paara@gmail.com *Կայք՝* www.paara.am	կ. գ. թ. ***Տիգրան Հարությունյան***	6	2 հետազոտութ., 3 հոդված, 4 գիտաժողով
18.	ՀՀ ՊԿԱ Կառավար-չական գործունեության հոգեբանություն գիտա-հետազոտական լաբո-ռատորիա	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Կիևյան 8 *Հեռ.՝*(374 10) 26 92 59 *Էլ. հասցե՝*info@paara.am, aspa.paara@gmail.com *Կայք՝* www.paara.am	հ. գ. թ. ***Ռուբեն Աղուզումցյան***	4	1 ձեռնարկ, 8 հոդված, 2 մենագրութ.
19.	ՀՀ ՊԿԱ Գիտության կառավարման հետա-զոտական կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Կիևյան 8 *Հեռ.՝*(374 10) 26 92 59 *Էլ. հասցե՝*info@paara.am aspa.paara@gmail.com *Կայք՝* www.paara.am	բ. գ. թ. ***Արսեն Լոբյան***	7	

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ					
20.	ԵՊԼՀ Բրյուսովյան գիտական կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, 0002, ք. Երևան, Թումանյան 42 *Հեռ.՝* (+374 10) 53 05 52 (212) *Էլ.հասցե՝* brusovcabinet@brusov.am *Կայք՝* http://www.brusov.am/hy/structure/centers/brusov-science-center	բ. գ. թ. ***Մանա Զուլյան***	13	1 գիրք (տպագր. պրոցեսում) 1 ժողովածու
21.	ԵՊԼՀ Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, 0002, ք. Երևան, Թումանյան 42 *Հեռ.՝* (+374 10) 53 55 50, 531 *Էլ. հասցե՝* coecenter@brusov.am *Կայք՝* www.brusov.am	***Մանա Ազարյան***	2	2 գիտաժողով (2013 թ.)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ «ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ					
22.	«Ուրարտու» համալսարանի Ընտանիքի հետազոտման և աջակցության կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Կորյունի 19ա, 7-րդ հարկ *Էլ. հասցե՝* urartuuniversity@yahoo.com *Կայք՝* www.urartuuniversity.com *Էջեր սոց. ցանցերում՝* www.facebook.com/pages/Urartu-University-of-Practical-Psychology-and-Sociology	հ. գ. դ. ***Մեդրակ Մեդրակյան***	7	1 աշխատություն
23.	«Ուրարտու» համալսարանի Կիրառական վարքային վերլուծության կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Կորյունի 19ա, 7-րդ հարկ *Էլ. հասցե՝* urartuuniversity@yahoo.com *Կայք՝* www.urartuuniversity.com *Էջեր սոցցանցերում՝* www.facebook.com/pages/Urartu-University-	հ. գ. դ. ***Մեդրակ Մեդրակյան***	7	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ					
24.	ՀԱՀ Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիր	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40 *Հեռ.՝* (374 60) 61 27 44 *Էլ. Հասցե՝* auatrdp@aua.am,hyumushaghjyan@aua.am *Կայք՝* http://trdp.aua.am/	պատվավոր նախագահ՝ դոկտոր ***Հարություն Արմենյան,*** տնօրեն՝ դոկտոր ***Արփի Բալյան***	8	2 գիտաժողով (2008 թ., 2010 թ.)
25.	ՀԱՀ Թրփանճեան հասարակական հետազոտությունների կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40 *Հեռ.՝* (374-10) 51 25 80 *Կայք՝* http://tcpa.aua.am/	դոկտոր (դոցենտ) ***Սիմոն Քլարկ***	3	2 մենագրութ., 3 գիտաժողով (2013–2014 թթ.)
26.	ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40 *Հեռ.՝* (+374 60) 61 25 20 *Էլ. հասցե՝* ace@acopiancenter.am *Կայք՝* www.ace.aua.am *Էջեր սոցցանցերում՝* Facebook	***Ալեն Ամիրիանյան***	3	2 հոդված
27.	ՀԱՀ Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոն	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40 *Հեռ.՝* (374 10) 51 25 92 *Էլ. հասցե՝* vpetrosi@aua.am *Կայք՝* http://www.auachsr.com *Էջեր սոցցանցերում՝* Facebook	բ. գ. թ., դոցենտ ***Վարդուհի Պետրոսյան***	13	3 զեկուցում 16 հոդված
ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ					
28.	ՀՌՀ Ազգային անվտանգության ոլորտում ռազմավարական հետազոտությունների լաբորատորիա	*Հասցե՝* ՀՀ, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123 *Հեռ.՝* (374 10) 22 28 57 *Էլ. հասցե՝* nslabrau@gmail.com *Կայք՝*http://nslab.rau.am/rus *Էջեր սոցցանցերում՝* Facebook	փ. գ. թ., դոցենտ ***Հովհաննես Մարգսյան***	5	1 գիտաժողով (2015 թ. ապրիլ)

Руководитель исследовательской группы
ВАРДАН АТОЯН
кандидат экономических наук
Состав исследовательской группы
СОФЬЯ ОГАНЯН
кандидат философских наук, доцент
АРПИНЕ МАЛКДЖЯН
соискатель
ШУШАН МОВСИСЯН
младший эксперт

Вузовские исследовательские центры Армении

В контексте современных политических, экономических, социокультурных вызовов важное значение имеют гуманитарные аналитические, исследовательские центры, действующие в вузовской среде. Изучению этого вопроса посвящено исследование «Вузовские исследовательские центры Армении», которое проведено в рамках совместного исследования «Аналитические центры региона», осуществляемого Научно-образовательным фондом «Нораванк» и Исследовательским центром «Амберд» Армянского государственного экономического университета.

Исследование вузовских гуманитарных аналитических центров Армении проведено по следующим критериям:

- ✓ стратегические приоритеты,
- ✓ структура (руководитель, орган управления, подразделения),
- ✓ аппарат,
- ✓ публикации,
- ✓ партнёры,
- ✓ финансовые данные.

По исследовательским направлениям 29 вузовские аналитические центры подразделены на арменоведческие, культурно-цивилизационные, экономические, социологические, психологические, эколого-здравоохранительные, информационно-стратегические, научно-образовательные группы.

В последнем отделе работы представлены заключения исследования, в частности, подчёркнуто, что вузовские гуманитарные аналитические центры РА отличаются друг от друга структурами (орган управления, подразделения), прозрачностью деятельности (Государственный бюджет РА, вузовские отчёты, представленность в интернете), содержанием и характером научно-исследовательских работ.

Head of research team
VARDAN ATOYAN
PhD in Economics
Members of research team
SOFYA OHANYAN
PhD in Philosophical Sciences
ARPHINE MALKJYAN
Researcher
SHUSHAN MOVSISYAN
Junior expert

University affiliated analytical centers of Armenia

Current political, economic, social and cultural challenges highlight the importance of university affiliated analytical centers, particularly humanitarian and social research centers. Research "University Affiliated Analytical Centers of Armenia" is devoted to the study of above-mentioned issues. It was implemented within the joint research project of "Noravank" Foundation and "Amberd" ASUE Research Center entitled "Regional Analytical Centers".

The study was conducted according to the following criteria:

- ✓ Strategic priorities,
- ✓ Structure (leadership, governing body, departments),
- ✓ Staff,
- ✓ Publications,
- ✓ Partners,
- ✓ Financial information.

In accordance with the research orientation 29 university affiliated analytical centers are classified into the following groups: Armenology, Cultural and civilizational, Economic, Social, Psychological, Ecological and Healthcare, informational and Strategic and Scientific-Educational research centers.

In the conclusions of the study particularly it is emphasized, that university affiliated humanitarian analytical centers of the RA differ significantly in their structure (governing body, departments), transparency (the state budget of the RA, university reports, presence in social networks), research areas and nature.

Հեղինակային խմբի ղեկավար՝
ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու

Հեղինակային խմբի անդամներ՝
ՍՈՖՅԱ ՕՀԱՆՅԱՆ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԱՐՓԻՆԵ ՄԱԼՔՋՅԱՆ
փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի հայցորդ
ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հեղինակային կենտրոնի կրտսեր փորձագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Խմբագիր՝ ***Վալերի Միրզոյան***
Տեխնիկական խմբագիր
և ձևավորող՝ ***Նաիրա Խչեյան***
Էջադրող և սրբագրող՝ ***Սյուզաննա Բոյաջյան***

Չափս՝ 70×108 1/16:
3,5 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37